

ՎԱՀԷ-ՎԱՀԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆԻՆ

ՎԱՉԷ ՂԱԶԱՐԵԱՆ
mayrenipublishing@comcast.net

Վահէ-Վահեան (1908-1998), աւագանի անունով՝ Սարգիս Ապտալեան, մէկն է շա՛տ շատերէն, որոնք իրենց բանաստեղծական փորձերը կատարած են ներշնչուելով Վահան Թէքէեանէն (1878-1945): Միաժամանակ, ան մէկն է այն շա՛տ քիչերէն, որոնք կրցած են Հայ գրականութեան անդաստանին մէջ արմատ նետել՝ անկախանալով սկզբնական ազդեցութենէն եւ ինքնահաստատուիլ շնորհիւ բնատուր տաղանդի մը:

Իր 12 Սեպտեմբեր թուակիր նամակով Վահեան այդ ազդեցութիւնը կ'ընծայէ պարզ ու մեկին, ըսելով. «Իմ պատանի օրերս՝ հոսած է ձեր հոգիին նուազը՝ իմ դեռ անկազմ մտածումիս ու երազներուս պարտէզին մէջ...» եւ դեռ աւելցնելով թէ իր «պզտիկ երգեր»ուն մէջ ինք ամէն մարդէ առաջ ճանչցած է «հեռաւոր արձագանգը շատ ծանօթ ու տրոսմօրէն անոյշ երաժշտութեան», որ Վահան Թէքէեանինն էր:

Մեզի ծանօթ են Թէքէեանէն Վահեանին ուղղուած 15 նամակներ, ընդգրկող 28 Ապրիլ 1933էն 15 Դեկտեմբեր 1944 թուականները իբրեւ սահմանագիծ: Այդ նամակները Վահեան ինք արտագրած եւ յանձնած է Աւետիս Սանճեանին, որ իր հերթին զանոնք ամրափակած է Թէքէեանի հարիւրամեակին առիթով լոյս ընծայուած *Նամականիին* մէջ¹: Այդ նամակները, սակայն, չեն ներկայացներ Թէքէեանէն Վահեանին ուղղուած բոլոր նամակները կամ բացիկները: Յստակ է թէ առնուազն մէկ բացիկ դուրս մնացած է յիշեալ *Նամականիին*, որովհետեւ Վահեան կը հաստատէ 1935ի Յուլիսին կամ Օգոստոսին Թէքէեանի Երուսաղէմէն ղրկած բացիկը ստացած ըլլալը, բայց անոր վերարտադրութիւնը կը բացակայի *Նամականիին*:

Իր հերթին, Վահեանէն Թէքէեանին ուղղուած բոլոր նամակներու պատճէնները չէ որ ունինք մեր տրամադրութեան ներքեւ: Պատճէնները ձեռք անցուցած ենք Երեւանի Գրականութեան Եւ Արուեստի Թանգարանին մէջ պահպանուող Թէքէեանի արխիւէն: Տրամադրութեան տակ ունինք նաեւ նոյներուն պատճէնները՝ մեզի վստահուած երկրորդ աղբիւրէ մը: 1989ին, Փարիզ հերթական այցելութեան մը շրջանին, Հանգուցեալ Արթօ Համբարձումեան, որ կը վարէր ՀԲԸՄի Փարիզի գրասենեակի տնօրէնի պաշտօնը, մեզի յանձնած էր պատճէնները Թէքէեանի նոյն այդ արխիւային նիւթերուն, զորս 1981ին Հանգուցեալ մեթր Շաւարշ Սեյժոնքեան Լոզանէն բերելով յանձնած էր Գրականութեան Եւ Արուեստի Թանգարանի տնօրէնութեան: Յիշեալ երկու աղբիւրներէն ալ կը բացակային քանի մը նամակներ, թերեւս անոր համար որ Թէքէեան զանոնք չէ կրցած ամփոփել պահպանեալներու կողքին՝ թափառական կեանքի մը պար-

տաղրանքներուն բերումով, թերեւս ալ այն պատճառով որ անոնք փճացուած ու կորսուած են անհետ:

Կարելի է ըսել թէ նամակագրական կապին առիթ տուած է Վահեանի բանաստեղծական առաջին հատորը՝ Արեւ-անձրեւ, որ լոյս աշխարհ եկած է 1933ին: Վահեան մտածումը ունեցեր է անկէ օրինակ մը մակագրելու եւ առաքելու Թէքէեանին, - նամակի մը հետ կամ առանց նամակի: Թէքէեան 28 Ապրիլ 1933 թուակիրով շնորհակալագիր մը դրկած է Վահեանին, գնահատելով քերթուածներուն «վարակիչ յուզումը» եւ այլ իրազործումներ, միաժամանակ դիտել տալով զգացումներու նմանութիւնը անոնց եւ իր գործերուն միջեւ²:

22 Յունիս 1933ին, Թէքէեան կը գրէ Վահեանին. «Ստացած էի ձեր նամակը եւ ստացայ նաեւ՝ Երուսաղէմէն՝ ձեր դասախօսութեան բնագիրը»³: Այս ակնարկուած նամակը կ'ըլլայ թիւով առաջին կամ երկրորդ բացական Թէքէեանի արխիւէն, ինչ կը վերաբերի Վահեանի նամակներուն, եւ հետեւաբար՝ անծանօթ մեզի:

Այս անծանօթ նամակին կը յաջորդէ առնուազն ուրիշ անյայտ նամակ մըն ալ Վահեանէն, որովհետեւ Թէքէեան իր 14 Հոկտեմբեր 1933 թուակիրին մէջ կը գրէ. «չկրցայ... շնորհակալութիւն յայտնել ձեզի՝ ձեր նամակին ու լուսանկարին համար»⁴: Այդ լուսանկարով Վահեան փտահարաբար ուզած էր փոխադարձութիւն մը կատարած ըլլալ, որովհետեւ վերը ակնարկուած երկրորդ նամակով Թէքէեան իր լուսանկարը դրկած էր Վահեանին: Շատ հաւանաբար, այդ նամակին մէջ Վահեան նաեւ ներկայացուցած էր կենսագրական կարգ մը տուեալներ, ի միջի այլոց նշելով Անդրանիկ Մառուկեանի եւ իր ազգականական կապը, որուն իրրեւ հետեւանք Թէքէեան իր յաջորդ նամակին մէջ ուզած է լուսաբանութիւն ստանալ Մառուկեանի անձնասպանական փորձին մասին:

Այս նամակէն ետք է որ կարելի կ'ըլլայ հոս հրատարակուող եւ Սանճեանի Նամականիին մէջ արդէն լոյս տեսած նամակներուն ընդմէջէն հետեւիլ Թէքէեան Վահեան զրոյցին, թէեւ անկէ ալ կը բացակային կարգ մը օղակներ:

17 Ապրիլ 1934 թուակիրին մէջ, Թէքէեան կը յայտնէ թէ իր գրպանը կը պտրտցնէ Վահեանէն երկու նամակներ, որոնցմէ մէկը բաղդատարար նոր, իսկ միւսը՝ հինցած: Եթէ այդ հինցած նամակը Վահեանի 14 Օգոստոս թուակիրն է, ուրեմն գործ ունինք դարձեալ առայժմ անյայտ մէկ նամակի հետ. այսպէս՝ երկուքի պէտք պիտի ըլլայ բարձրացնել անյայտներուն թիւը ա՛յս պարագային:

Ուրի՞շ: Յարդ անծանօթ կը մնան նաեւ Վահեանէն Թէքէեանին ուղղուած 30 Մայիս 1935, 5 Յուլիս 1935, եւ 12 ու 21 Օգոստոս 1939 թուակիրները⁵:

Հոս հանրութեան ներկայացուող նամակները կը կազմեն արժէքաւոր աղբիւր մը Վահեան բանաստեղծին եւ մարդուն տաղանդն ու նկարագիրը չափելու տեսանկիւնով: Անոնք նաեւ կ'օգնեն աւելի լաւ հասկնալու Թէքէեանն ու թափանցելու անոր կեանքին եւ գրականութեան կարգ մը շերտերուն մէջ: Եւ դեռ, անշուշտ, անոնք նիւթ կը հայթայթեն 1930-40 ականներու հայ սփիւռքի պատմութիւնը հետազօտողներուն:

Վահեանի բանաստեղծական շունչը առկայ է նամակներուն մէջ առաւել կամ նուազ չափով: Ներկայ է ան իր նամակներուն մէջ իրրեւ ճկիլ չգիտցող ու չուզող Թէքէեանին հոգեկիցք, որովհետեւ իր հայու եւ մարդու արժանապատուութիւնն ալ թոյլ չի տար որ սակարկութեան հանէ իր համոզումները:

Հոս պիտի ուզէինք, սակայն, ընդգծել երկու յատկանշական գիծեր, որոնք, ինչպէս սովորութիւն է ըսել, կարմիր թելի նման կ'անցնին զանազան նամակներու ընդմէջէն՝ զանոնք շաղախելով իրարու եւ լուսաւորելով Վահեանի դէմքը:

Առաջինը՝ ոչ անպայման կարեւորութեան կարգով՝ պարտքի գիտակցութիւնն է հանդէպ Թէքէեանին: Ինքնախարանումի եւ ինքնադատապարտումի հասնող արտայայտութիւններ կան հոն, եւ հաստատումներ, թէ պիտի ուզէր հրատարակուած տեսնել Թէքէեանի ամբողջական քերթուածներու ժողովածուն (4 Յունուար 1944), կամ կը յուսար կուտակուած պարտքը վճարել լայն օրերու մէջ (20 Նոյեմբեր 1944):

Պէտք է ըսել թէ Վահեան հատուցեց իր պարտքը: Ան ամէն պատեհ առիթով արտայայտուեցաւ Թէքէեանի մասին բեմերէ եւ ամսագրերէ, ուսումնասիրեց անոր անձն ու գործը, անոր քերթուածներուն հանդէպ իր հիացումը փոխանցեց իր դաստիարակի շունչով սնած պատանիներու, հրատարակեց անոր շքեղ Հատընտիրը⁶, երբ Սփիւռքով եւ Հայրենիքով հայութիւնը կը նշէր Թէքէեանի ծննդեան հարիւրամեակը, եւ մինչեւ անգամ դասաւորեց որ Միացեալ Արարական էմիրութիւններու մէջ իքնաշարժի արկածի զոհ գացած իր Վահրամին անունով հիմնուած ՀԲԸՄի Վահրամ Ապտալեան Մշակութային Հիմնադրամին յատկացումով հրատարակուի Յակոբ Օշականի Վահան Թէքէեան աշխատութիւնը⁷: Մեծ եղաւ Վահեանի ներդրումը «քիչ եւ զէջ ճանչցում» Թէքէեանը ժողովրդականացնելու, «լաւ ճանչցնելու» ուղղութեամբ:

Երկրորդը, դա՛րձեալ պարտքի գիտակցութիւն մը, այս անգամ հանդէպ իր ժողովուրդին եւ... բանաստեղծական շնորհին: Կը խօսի ան «անվճար մնացած մտրիակներու» սպառնալիքէն, բարեկամներ յուսախար ընելու սարսափէն, դասալիք հռչակուելու վախէն: Ու թէեւ մերթ ընդ մերթ կը սողոսկի իր մէջ կասկածը՝ թէ արդեօք պիտի կարենա՞յ արդարացնել իր վրայ դրուած յոյսերը, տիրականը կը մնայ իր մէջ արեւոտ օրերու յոյսը, հաստատապէս համոզուած՝ թէ հպարտ ճակատով պիտի կարենայ ներկայանալ աշխարհին:

Այդպէ՛ս ալ եղաւ: Վահեան յումպէտս չվատնեց իր շնորհը, դասալիք չեղաւ իր ժողովուրդին առջեւ, եւ արեւ ու անձրեւի խառնուրդ իր կեանքին ընթացքին, իր գրականութեամբ փորձեց արեւ բերել շուրջիններուն:

◦ ◦ ◦

Առաջին անգամ է որ Հայկազեան Հայագիտական Հանդէպ կը հրատարակէ լիբանանահայ ժամանակակից գրողի մը նամակներէն խոսք մը, որոնք ունին անձնական վերագրումներ եւ որակումներ, զորս կը պահպանենք ան-

խաբար՝ ժամանակի շունչն ու մտայնութիւնները հարազատօրէն արտացոլացնելու:

Այս առթիւ խմբագրութիւնս կը վերահաստատէ որ Հայկազեան Հայագիտական Հանդէսի մէջ տեղ գտած կարծիքները կը պատկանին համապատասխան հեղինակներուն: Այս մէկը առաւելաբար նկատառելի պէտք է դառնայ նամակներու հրապարակումներու բաժնին մէջ, որովհետեւ մանաւանդ անոնք կրնան ունենալ խիստ անձնական բնոյթ եւ սահմանուած շրջալ բնօրրցող լայն շրջանակի համար - Խմբ.:

Ա.

Ֆելուդա, 14 Օգոստ. 1934

Շատ սիրելի

Պրն. Վահան Թէքեան,

Ձեր այս վերջին նամակովը⁸, գրելով Ծառուկեանի⁹ անձնասպանութեան փորձին շուրջ, եւ իր քայլը լուսարանող մանրամասնութիւններ ուզելով, կը դնէք զիս շատ դժուար կացութեան մը մէջ: Շատ աւելի դժուար, իրապէս, քան կ'երեւակայէիք: Ատկէ՛ վարանքը ամէն օր, ու ուրեմն՝ յապաղումը այս տողերուն:

Եւ դարձեալ, այսօր իսկ, առանց ներքին մեծ ճիգի մը չէ որ մատներս կը բռնեն սա գրիչը՝ ճերմակին վրայ սետեր նետելու: Միշտ ատելութիւնով խառն արգահատանք ունեցած եմ հանդէպ այն հաւատափոխներուն, որոնք նախատինքով խօսած են իրենց պաշտամունքի նախկին առարկային շուրջ, աստուածութիւն մը, գաղափար մը թէ անձ մը ըլլայ անիկա: Այս պահուս, քիչ մը նոյն այդ զգացումը կ'ունենամ իրեն հանդէպ, երբ կը հարկադրուիմ գրել ձեզի հոգեկան անդարմանելի փլուզումին մասին, զոր յառաջացուց իմ մէջ անձն ու գործը այդ տղուն (որ բարեկամս էր երբեմն), իր նկարագրին արտակէտրոն ու պարսաւելի խտտորումներովը: Կը գրեմ ուրեմն՝ վստահ ըլլալով թէ ազնիւ բարեկամ մըն էք եւ հասկցող հոգի մը:

Կանուխէն արդէն ճանչցած ու սիրած եմ իր մէջ կարգ մը արժէքաւոր ընդունակութիւններ, մասնաւորաբար, յարմարութիւն մը արուեստի: Եւ հարկ եղած տեղը, գրաւոր թէ բերանացի, արտայայտուած եմ այդ մասին¹⁰: Բայց, նոյնքան կանուխէն, իմ համակրանքս վարանած է միշտ մութ կէտի մը առջեւ, որ դժբախտաբար լայնցած ու խորացած է՝ մեր միջեւ ամէն օր քիչ մը սեղմուող մօտիկութեամբ մը, ու վերածուած է վերջապէս անյատակ անդունդի մը՝ իր այս վերջին ժեսդը պայմանաւորող վիճակին յայտնաբերած հոգեկան ու ֆիզիքական ախտաւորութեամբը:

Եւ ըսեմ անմիջապէս, մեծ հիասքափութեան մը պատճառած բոլոր ցառովը, թէ դէպի մութ անձանօքը փորձուած այդ ճամբորդութիւնը, փոխանակ շրջանակելու իր երիտասարդ դէմքը «տժգոյն լուսապսակով» մը¹¹, որ այնքան բնական պիտի ըլլար, նետեց իր անունին շուրջ միայն կեղծ պատմուճան մը

անարժան փառքի, որմէ բարարարութիւն գտած կը թուի իր ունայնամտութիւնը:

Ինք, անշուշտ, չափով մը զոհն է իր շրջապատին ու անկէ ծծած գաղափարական վատառողջ սնունդին, բայց շատ աւելի՝ զոհն է իր խառնուածքին ախտաւոր համեմատութիւններու հասնող զարտուղութիւններուն: Եւ բացատրելու համար զանոնք, հարկ պիտի ըլլար երթալ մինչեւ ընտանեկան բարդութիւններու, արտրի սարսափին, կանխահաս տառապանքներու եւ նոյնքան կանխահաս վայելքներու ճախճախտուտին ու սխալ ըմբռնուած մայրական սիրոյ մը անխտհեմ արտայայտութեան, հասնելու համար մինչեւ հոգեկան այն արգահատելի սնանկութեան զոր ցուցադրեց իր քաւութեան կասկածելի փորձէն առաջ, ու նաեւ վերջը, դժբախտաբար:

Օժտուած անվիճելի արժանիքներով՝ ունէր սակայն միշտ չափազանցուած ունայնամտութիւններ: Շատ թերի մշակոյթով շարք մը ընկերներ, որ կը շրջապատէին զինք, միշտ սնունդ կու տային իր այդ տկարութեան: Աւելցուցէք նաեւ Պոտրլէռի¹² նման հանճարաւոր ախտաւորներու կեանքին ընթերցումը, եւ անոնց նմանելու սնափառ ճիգը, շատ նման այն ճիգին որ առակի գորտիին¹³ եղաւ, ու դուք կ'ունենաք հոգի մը ամէն շեղումի ենթակայ:

Փորձեց, ու յաջողեցաւ շատ անգամ, հիացնել մարդիկ իր փոխ առնուած տարօրինակութիւններուն վրայ: Չեխութիւնն ըրաւ կեանքի պայման ու գլխիվայր մխրճուեցաւ առարկելի հանոյքներու մէջ: Մխալ գնահատանքներ հովահարեցին իր փառասիրութիւնը, եւ ինք, մեծ անմտութեամբ մը, վազեց աժան ծափերու, առանց ըմբռնելու սակայն թէ շատ սուղ կը վճարէր անոնց, խաթարումովն իր հոգիին: Իր մեծամոլութիւնը հետզհետէ արհամարհել տուաւ իրեն ամէն իշխանութիւն իր անձին վրայ, եւ ամէն սրբութիւն՝ մարդերու հոգիին մէջ: Այդ մտայնութեան բերած առաջին գայթակղութիւնը եղաւ բախումը իր եւ հայ ճեմարանին¹⁴ միջեւ, ուր ինք կ'ուսանէր նպաստով, ու վերջացաւ իր վտարումովը: (Պատասխանատուութեան մեծ բաժին մըն ալ՝ ճեմարանի այդ համբաւուած իմաստուններուն վզին: Իրենց ներարկած պատուաստը տարբեր պտուղ չի կրնար տալ): Պատահեցաւ նաեւ որ այդ տղան հանդիպի իր ճամբուն վրայ սէրերու, մէկը մանաւանդ՝ փարթամ, որ շլացուց իր աչքերը, եւ իր շտես հոգին շտեղծուեցաւ ինք իր մէջ, ու անմեկնելի թեթեամտութեամբ մը ուզեց պոռալ աշխարհի որ յաղթանակներ արձանագրուին իր անունին: Սէրը, որ շատ անգամ արիւնի հիւանդ բորբոքում մը եղաւ իր մէջ, մղեց զինք ահաւոր անկումներու զորս կը զգուշանամ յիշատակել անգամ: Եւ ինք, արդարացնելու համար իր արատաւոր անձը, տղամարդու կաթիլ մը արիւն ունեցող ռեւ մէկու մը անվայել տմարդութեամբ, չխնայեց նոյնիսկ սիրոյ նուիրականութեան, եւ իր սիրածին անունը, աներեւակայելի գրպարտութիւններով, դարձուց նշաւակ հանրային պարսաւին ու անջնջուելի արատաւորումին: Միայն խելագարութիւնը պիտի կրնար բացատրել ատիկա: Եւ ամէն ծայրայեղ կիրք տեսակ մը խելագարութիւն չէ՞ ինքնին:

Երեւակայեցէք յուսախարութիւնը իր մտերիմներուն, որոնց քարեացականութիւնը սպառեց չարաչար՝ իր զեխութիւններովը, եւ յետոյ վարձատրեց

անոնցմէ մէկը (որ իր կեանքին կէտը չէր խնայած իրեն) «վատ» պատուանու-
նով: Ի՞նչ հարկ մանրամասնութիւններու: Չե՞ն բաւեր նկարագրի այս քանի
մը գիծերը պարզելու բարոյական ու նիւթական սնանկութիւնն իր անձին, որ
իբրեւ միակ ելք յղացաւ թատերական զգայացունց այդ տեսարանը. ո՛չ իբրեւ
վախճան (որովհետեւ շատ երկշոտ էր ինք ատոր համար) այլ իբրեւ միջոց վե-
րագտնելու կորսուածը: Կամ, ո՛վ գիտէ, գուցէ անդրադարձումի եւ զգայական
արթնութեան հագուադէպ վայրկեանի մը, ծանր կշռեց մեղքն իր բռնադատ-
ուած խիղճին վրայ, եւ ինք կատարեց այդ շարժումը իբրեւ փրկութիւն: Երանի
այս վերջինն ըլլար, դժբախտաբար սակայն աւելի հաւանական կը թուի վեր-
ջինը¹⁵: Եւ եթէ ա՛յդ էր շարժառիթը, ինչու չէ, յաջողեցաւ չափով մը, քանի որ
իր ընկերները շահագործեցին կատակերգութիւնը, ի նպաստ իրենց ծանօթ
տեսակետներուն, նոյն ատեն շոյելով միշտ ենթակային սնամտութիւնը: Ի-
մաստութի՛ւնը կեանքին...:

Կը տեսնէք ուրեմն, սիրելի Թերէեան, թէ «սեւին ու ճերմակին վեհութիւն-
վը լեցուն» աչքերու եւ «մեծ իմաստութիւն մը գրկած» վերադարձողի խօսքն
անգամ կարելի չէ ընել¹⁶: Քանի մը օրէն կ'ելլէ հիւանդանոցէն (թէ եւ ծախ ոտ-
քը շատ տկար է տակաւին) հոգին գեղուն նոյն ունայնամտութիւններով եւ ա-
ժան փառքի նոյն տենչերով, երթալ խառնուելու իրեններուն երամակին, Եռա-
գոյնն իրեն պատանք կտակած ըլլալուն հերոսութիւնը գարդանշանի մը պէս
կախած իր կուրծքէն: Ու մտածե՛լ այն *եռագոյնի*ն որ փառք պիտի սեպէր ան-
փոփել իր մէջ մարմինը մէկուն որ օր մը օրանց իր հպարտ ծածանումին հա-
մար կաթիլ մը արին իսկ չէր թափած... Մտածե՛լ այդ հոգեբանութիւնը խո-
րացնող խմբակին վրայ, ու... չա՛լ...:

Այսքան՝ իբրեւ սկիզբ ու վախճան:

Բայց այդ բոլորը պատճառ մը չէին անշուշտ որ փորձին առաջին լուրը
չսարսռացնէր զիս զիտիս առանձնութեանը մէջ, ու ես չվազէի իրեն՝ թարթիչ-
ներս ծանրացած խոշոր կաթիլներով: Եւ դարձեալ, պատճառ մը չեն ատոնք
որ այնքան յուսախաբութիւններէ վերջ չունենամ սիրոյ եւ արգահատանքի
խորունկ զգացում մը իրեն համար, եւ մարդկային տկարութիւններուն ու զա-
նոնք պայմանաւորող առեղծուածին առջեւ՝ ակնածանք մը անդիմադրելի:

Գրեցի այս բոլորը, զգալով միշտ թէ ուրիշ ո՛չ ոքի կրնայի գրել, ու հաւա-
տալով նաեւ թէ ուրիշ ո՛չ որ պիտի գիտնայ զանոնք: Կ'անցնին անշուշտ այս
յիմարութեան օրերը, եւ այդ տղան կը գիտակցի անոնց ցաւալիօրէն ծիծաղե-
լի էութեանը: Կու գայ հասունութեան ու լրջութեան շրջանը եւ ինք կը թօթափէ
իր հոգիէն հմայքը ունայն փառքին, նուիրուելու համար միակ իրական ու յա-
ւերժական սիրուիին որ բանաստեղծութիւնն է:

o o o

Հազիւ երկու շաբաթ առաջ վերջացուցի աշխատանքս դպրոցին մէջ¹⁷, ու
հիմա, իմիցներուս հետ, կը գտնուիմ Լիբանանի ուրիշ մէկ գիւղը, որուն ցերեկ-
ները գով են՝ շոճիներու ստուերով, ու զիշերները՝ երգեցիկ, սօսափունովը
բարտիներուն:

Երկար ատեն է ո՛չ մէկ լուրջ աշխատանքի կրցած են լծուիլ: Այս բոլոր ցնցումները, իրենց պարտադրած ջիղերու երկարատեւ լարումով, անդրադարձան առողջութեանս վրայ եւ ըրին զայն պահ մը լրջօրէն մտահոգիչ: Հիմա լաւ եմ: Կը սարսափիմ անմակընթաց կեանքի մը տափարակ առօրեայէն, բայց տեսակ մը՝ կը ցանկամ զայն, քիչ մը խաղաղութիւն ու հանգիստ սպասելով անկէ իմ յոգնած գոյութեանս:

Գպրոցական զալ շրջանին համար, Անթիլիասի դպրեմանքէն կը հրաւիրեն զիս իբրեւ գրականութեան ուսուցիչ, բայց կը վարանիմ ընդունիլ, նաեւ՝ գործին նորութեան ներշնչած անվստահութենէն, ու յետոյ՝ շրջանակէն¹⁸: Հայկական է վերջապէս, իր բոլոր խանդավառիչ հանգամանքներովը միատեղ իր շատ յայտնի անպատեհութիւններովը:

Շատ երկարեցաւ արդէն ու ես տակաւին ոչինչ գրեցի ձեր մասին: Տիկ. Սեզան¹⁹ ըսած էր ժամանակին թէ կը մտածէիք այս ամառ Սուրիա²⁰ հանդիպիլ անգամ մը: Այնքա՛ն ոգեւորիչ ու հաճելի պիտի ըլլար ատիկա՝ ձեր անձին հանդէպ՝ սէր ու արուեստին՝ հիացում ունեցող բոլոր երիտասարդներուն որ կան հոս: Չեկա՛ք: Եւ թերեւս միջավայրն ալ արժանի չէր այդ պատիւին, միջավայրը որ (բացառութիւն է Հալէպը) այնքան դատապարտելիօրէն անտարբեր ու ապերախտ գտնուեցաւ իր արժանատրին հանդէպ, երբ անոր տաժանքին ու տաղանդին տօնը կը կատարուէր ամէն կողմ²¹:

Սիրեցի ձեր հնչեակը²²: Անոր ձեռագիրը ինձի դրկելու գաղափարը հպարտացուց զիս: Կան հոն անմահ տողեր—

«Ճրպոտ՝ հրաշագործ զօրութեան մը ձեռք»...

«Հայկական երգին աւագանն անհուն»...

յետոյ՝ «Ճրպոտը ընդմիշտ ճաքած կը մընայ...»:

Բայց ներեցէք ընել արուեստի քանի մը պզտիկ դիտողութիւններ: Յայտնի է քիչ մը որ ձեր խստապահանջ բժախնդրութիւնը տակաւին վերջնական մշակումի չէ տարած զայն: Առաջին տողին «կարծր, եփենաշող»ը ի՞նչ մասնաւոր հանգամանք կ'աւելցնէ «ճաքտ»ին վրայ, բացի տաղաչափական պահանջի մը գոհացում տուող տանելի որակում մը ըլլալէ, որուն չափն իսկ քիչ մը ծանր կ'արտաբերուի: 13րդ տողին «ակերն ընդերկրեայ»ին տեղ, նորէն ծանրաբեռնուած հատուած մըն է, աւելի լաւ չէ՞ «ակերն ընդհողեայ»: Վերջին տողին մէջ «ը» ձայնաւորին խճողումէն (ճրպոտը ընդմիշտ) գերծ մնալու համար կարելի չէ՞ ըսել «է՛ր ճրպոտն ընդմիշտ ճաքած կը մընայ»: Ասոնք, արդար ըլլալու պարագային իսկ, աննշան քիծեր են միայն, անկարող՝ եղծելու վսեմ դէմքը վարպետին, որ տրուած է հոն ներշնչումով ու երաժշտական յղացքով:

Քանի մը անգամ երբ մտադրած եմ ձեզի գրել, ուզած եմ հարցնել ձեր պաշտպանեալն ու արժանաւոր աշակերտը՝ Չ. Միրսէլեանի²³ մասին, ու միշտ աճապարանքիս մէջ մոռցած եմ: Գիտեմ միայն թէ գացած է Միացեալ Նահանգներ (կարծեմ 1924-ին)²⁴ գիւղատնտեսութիւն ուսանելու, բայց չեմ գիտեր թէ ո՛ր է հիմա եւ ինչ կ'ընէ: Միրած եմ իր պատանիի ներշնչեալ քնարը, որ այնքան վաղահասօրէն լոեց դժբախտաբար, ինձի անծանօթ պատճառնե-

րով: Շատ ուրախ կ'ըլլամ եթէ հաճիք հաղորդել ինձի իր մասին ունեցած ձեր տեղեկութիւնները:

Թոյլ տուէք շնորհակալ ըլլալ ձեզի, իմ անձիս ու աշխատանքիս հանդէպ ցոյց տուած ձեր անկեղծ շահագրգռութեանը համար:

Հիացումով ու սիրով՝

Վահէ-Վահեան

Հասցէ՝ Boite Postale No 631

Beyrouth, Liban

Բ.

Անթիլիաս, 27 Օգոստ. 1935

Սիրելի Պրն. Վահան Թերեան,

Կը ներէք որ առիթ չունեցայ Երուսաղէմէն²⁵ գրած ձեր բացիկին²⁶ անմիջապէս պատասխանելու: Ըսեմ միայն թէ մեծ յուսախարութիւն մը եղաւ ձեր բոլոր բարեկամներուն ու հիացողներուն համար: Տիկ. Սեզան կ'ըսէ թէ վերջին պահուն գրեթէ որոշած էր Պաղտատէն չվերադառնալ, բայց Լիբան[ան]ի մէջ, քանի մը ուրիշ մտերիմներու հետ ձեզի հանդիպելու գաղափարը հրապուրեց զինք ու եկաւ... լսելու համար թէ...:

Այս քանի մը տողերը կը գրեմ քիչ մը շատ անփօրէն, աճապարանքով: Նախ կ'ուզեմ ջերմօրէն յանձնարարել ուսուցչանոցի այս տարուան թեկնածուներէն երկու հոգի, Պրն. Սարգիս Եափուճեան²⁷ եւ Պրն. Վահէ Մարտ[ի]րեան²⁸: Առաջինը իմ անցեալ տարուան աշակերտներէս է, ու թէս մաթեմաթիքի եւ գիտութեան մէջ քիչ մը տկար, լեզուի եւ գրականութեան մէջ ցոյց տուած է լաւ ընդունակութիւն: Երկրորդին մտաւորական կարողութիւնները շատ ծանօթ չեն ինձի, բայց ճանչցած եմ զինքը իբրեւ ազնիւ նկարագրով եւ աշխատելու եռանդ ունեցող պատանի մը: Երկուքն ալ արժանի են միջնակարգ կրթութեան մը եւ կարող են տանիլ նման կրթութեան մը հարկադրած պատասխանատուութիւնը:

Այս տողերուս հետ կը գրեմ նաեւ Տնօրէն Պրն. Կիրակոսեանին²⁹, պատասխանելով իր 8 Օգոստ. թուակիր նամակին: Անկեղծօրէն շնորհակալ եմ որ ջանացած էք իմ թեկնածութիւնս ընդունիլ տալ: Հա՞րկ է ըսել թէ վաղուան պայքարին համար պատրաստուող մեր մատաղ սերունդին կազմութեան ի խնդիր տարուած աշխատանքին իմ բաժինս բերելու համար տրուած այս առիթը եւ ձեր ազնիւ ու խելացի մտերմութեան մօտիկ վայելքը կը խանդավառեն զիս: Կէտ մը միայն, չափազանց խեղճ է նշանակուած թոշակը, անբաւական՝ իմիներուս քիչ մը պատուաբեր կեանք մը ապահովելու: Բացատրեցի այդ կէտը Պրն. Կիրակոսեանին, եւ խնդրեցի որ եթէ հնարատր է յաւելում մը ընէ: Կը խնդրեմ ձեզմէ եւս որ չխնայէք ձեր ազդեցութիւնը ի նպաստ ինձի: Ամէն պարագայի, պատրաստ եմ գալ: Ի գո՛ր է աւաղել կորսուած առիթներուն համար:

Չունի՞ք նոր աշխատանքներ: Կը յուսամ թէ նոր միջավայրները բերին ձեզի նոր ներշնչումներ: Ես գրեթէ ամբողջ տարի մը ամուլ անց[ը]նելէ վերջ, կրցայ քանի մը պզտիկ բաներ պատրաստել այս արձակուրդին:

Շուտով ձեզ տեսնելու յոյսով³⁰ ու մտերմական սիրով՝

Ձերդ

Վահէ-Վահեան

Գ.

Նիկոսիա, 27 Դեկ. 1935

Սիրելի Պրն. Վահան Թէքեան,

Շատ աճապարանքով կը գրեմ այս քանի մը տողերը, ոչ այնքան՝ ուշացած պարտք մը հատուցանելու փութկոտութեամբ, այլ՝ ըսելու մանաւանդ թէ ձեր ինձի հանդէպ ցոյց տուած ազնիւ հետաքրքրութիւնը կը լեցնէ զիս հաճոյքով ու հպարտութեամբ:

Պրն. Կիրակոսեանին գրած ձեր նամակով ուզած էիք որ կադանդի թիւին համար ես ալ քան մը դրկեմ ձեր թերթին³¹: Այդ հրատերը կ'ընդունիմ իբրեւ պատիւ մը, բայց կը ցախիմ որ հնարաւորութիւնը պիտի չունենամ ներկայանալի գործով մը օգտուելու այդ ընծայուած առիթէն: Անհանդարտ քափառումներու ամուլ շրջան մը եղաւ այս ամառուան արձակուրդս: Իսկ անոր յաջորդող ամիսները երբեք թոյլատու չեղան վայրկեան մը անգամ յատկացնելու մտերիմ աշխատանքի: Քրքրեցի հին թուղթերս ու գտայ այս տողերը, առաջին երգը՝ ծրագրուած երկար շարքի մը որ ընդհատուեցաւ, զուցէ վերջնականապէս³²: Եթէ չհամիք, կրնաք դատապարտել զայն օրհնեալ զամբիւղին, առանց խղճահարութեան: Ինչ որ կը ցաւցնէ զիս այնքան՝ մտքի այս յանցարար ծուլութենէն աւելի՝ իմ վրայ ի գուր վատնուած յոյսն է իմ բարեկամներուս: Անվճար մնացած մտրիակներու սպառնանքը կ'ընէ իմ հոգիս՝ թեաքե՛կ...: Միակ միսիքարութիւնս այն է թէ երակներս չեն պաղած, կը կրեն տակաւին իրենց մէջ ջերմութիւնը բարի կրակին: Կը սպասեմ օրերուն, արեւոտ օրերուն, որ քանան իմ մէջ նոր ծաղիկներ, նո՛ր բոյրերով: Այն ատեն միայն պիտի կրնամ հպարտ ճակատով ներկայանալ բարեկամներուս: Հիմա՛ կ'ապաւինիմ անոնց բարի ներողամտութեան:

Լաւ մաղթանքներ Նոր Տարիի ու Ծնունդի առթիւ:

Մտերմական սիրով՝

Վահէ-Վահեան

Գ.

Նիկոսիա, 12 Սեպտեմբեր 1936

Սիրելի Պրն. Վահան Թէքեան,

Եթէ ժամանակն ըլլար միակ չափանիշը վայելքի, անկասկած՝ կարճ տեւեց մեր հանդիպումը³³: Երկու օր միայն՝ բող իմաստուններն հաշուեն անոր վայրկեանները: Ես խուզարկուն եմ կեանքի հանքերուն, կը համրեմ անանուն գոհարներն անոր, որոնք կ'իյնան հոգիին մէջ, արեւի բիւրեղ շիթերու նման:

Իմ պատանի օրերես՝ հոսած էր ձեր հոգիին նուագը՝ իմ դեռ անկազմ մտածումիս ու երազներուս պարտեզին մէջ: Երբ հասունցաւ քիչ առ քիչ, զգայարանքներու եւ միտքի իմ կեանքս, եւ ունեցայ իմ պզտիկ երգերս, ե՛ս, ամէն մարդէ առաջ, ճանչցայ անոնց մէջ հեռաւոր արձագանգը շատ ծանօթ ու տրտմօրէն անոյշ երաժշտութեան մը: Այս խոստովանութիւնը, սակայն, որ առաջինը չէ, բոլոր երբեք ենթադրել չտայ՝ խորքի եւ դաշնակութեան նմանութեան մը սնամիտ յաւակնութիւնը: Մեծութիւնները միշտ անջատ ու անկրկնելի գոյութիւններ են: Կրնան անոնց շուրթին մէջ ուռճանալ նոր գեղեցկութիւններ, որոնք սակայն կը տարբերին անսպայման՝ գոյնովն ու ձեւովը իրենց կառոյցին: Եթէ ստոյգ է հաղորդութիւնը հոգիներու, իմս է պատիւը, որովհետեւ դիմած եմ վճիտ ակի մը:

Ճանչցած էի ձեզ իբրեւ խորհրդախոյզ արուեստագէտ մը, որ զիտէ այնքան խոհականօրէն ու այնքան ճարտարութեամբ քրթոացնել լարերն արմենական բարբառին: Կը ճանչնամ ձեզ հիմա իբրեւ բարեկամ նաեւ, ծիածանի մը պէս բազմերանգ ու տրտմօրէն զուարթ՝ իր խառնուածքովը, ու եկեղեցիի մը դուռին պէս բաց՝ իր հոգիովը: Հիմա նուագ յոգնաջան եւ աւելի բազմարդիւն պիտի ըլլայ վերձանումը ձեր արուեստին, որովհետեւ այնքա՛ն հասկնալի է դարձած խորունկ ու քեթեւ հեզմանքը, որ գրեթէ անբացակայ է ձեր տողերէն, զուարթախոսութիւնը՝ որուն արմատները կը ծծեն իրենց սնունդը՝ կեանքի հարուածներէն դառնացած հոգիի մը աւազանէն:

Քիչ են իմ բարեկամներս. մէկ ձեռքիս մատներն անգամ շատ պիտի գային անոնց բուռմին: Բայց ես հարուստ եմ անոնցմով. այնքան՝ որքան շատ քիչերը անոնց, որոնք, երազ մը իրենց աչքերուն, անցան ու դեռ պիտի անցնին այս խելագար հողագունդէն:

Դպրո՞ցը: Վերադարձիս, առաջին փորձառութիւնս եղաւ ճակատում մը սաղայելիին հետ որ Մահտեսեան³⁴ կ'անուանուի: Շատ վաղահաս է ինձի համար՝ տեսնել այսքան աղտեղութիւն: Որոշեցի թօթուել իր ճակատին դէմ՝ փոշին իմ ոտքերուս, ու հեռանալ, բայց գտայ որ կակուղ էր անիկա, փքուոռոյց ու նեխած գորտի մը նման, ու չէր գար հարուածի: Մեծ տխրոսաւոր մը կը շահագործէ հիմա «բարեկամ» բառը ու կը կաշկանդէ զիս: Տերը բարին կատարէ, ամէ՛ն:

Շատ սէր ու յարգանք ձեզի եւ Պրն. Կիւրճեանին³⁵: Բարեւներ Թովմասեանին³⁶, եթէ հող է:

Ս. Ապտալեան

Եթէ կարելի ըլլայ «Հրաշալի Յարութիւն»էն³⁷ քանի մը օրինակ ձեռք անցրնել, շատ երախտապարտ կը մնամ: Կ'ուզե՞ք որ գրեմ Թէօլէօլեանին³⁸:

Ս.Ա.

Ե.

Բրուսրոնօ, 29 Յուլիս 1939

Սիրելի Պրն. Վահան Թէրեան,
Գահիքէ

Երկար ատեն է չեմ գրած ձեզի. եւ հիմա, առանց վարանումի չէ որ կը փորձեմ վերսկսիլ միտքի ու սիրտի հաղորդակցութիւն մը, որուն ընդհատումը, ինձի համար, կամաւոր բայց գրեթէ անխուսափելի գրկանքի մը ցաւէն զերծ չէ եղած երբեք:

Պիտի ուզէի, սակայն, որ այս տողերը այսօր՝ ատելի՛ բախտաւոր շարժառիթ մը ունենային քան ա՛յն որ տուն կու տայ անոնց: Բայց կեանքը ե՞րբ է խորհուրդ հարցուցեր մեզի՝ իր տնօրինումներուն մէջ:

Գիտէք թէ չորս տարիէ ի վեր կը պաշտօնավարեմ Մելգ. Կրթ. Հաստատութեան³⁹ մէջ, իբրեւ հայ լեզուի եւ գրականութեան ուսուցիչ: Անշուշտ կը յիշէք նաեւ թէ ընդունեցի այս պաշտօնը՝ ձեր եւ ուրիշ բարեկամներու խորհուրդովը: Արդ, այս չորս տարուան իմ պաշտօնավարութիւնս երբեք զերծ չեղաւ տազնապաներէ՝ հոգեկան, գաղափարական ու նիւթական: Ու ես կրեցի այդ տազնապաները ո՛չ միշտ համակերպութեամբ, բայց մեծ համբերութեամբ մը ամէն ատեն, պատճառներով՝ որոնք պիտի անկասկած զարմացնեն «գործնական» միտքով մարդերը, սակայն պիտի ըլլան հասկնալի՝ գոնէ ձեզի: Ո՛վ պիտի ուզէր հաւատալ թէ ինչո՛ւ հրաժարեր էի Պրումմանայի ապահով ու հանգիստ պաշտօնէս⁴⁰, իջնելու համար Անթիլիաս: Ու դարձեալ, ո՛վ պիտի հասկնար թէ ինչո՛ւ կը մնայի Հաստատութեան մէջ, ի զին բացայայտ գոհողութիւններու, երբ Սուրիոյ օտար վարժարաններէն եւ Իրազի պետական դպրոցներէն պաշտօնի հրաւերներ կը ստանայի, որոնցմէ ոմանք՝ շատ հրապուրիչ իրենց պայմաններով: Չհասկցան, ու ես ճիգ չրրի որ հասկնային: Այնքան անյուսալի են անոնք:

Բայց, վերջապէս, կեանքը՝ երազ, զգացում ու գաղափար չէ միայն: Այդպէս՝ ուզենք կամ ոչ: Ունինք մարմին մըն ալ, զոր պէտք է պահել, անհիծեալ այդ մարմինը: Չեմ խօսիր հոգիին մասին, որուն ի հաշիւ ամէն մտահոգութիւն կրնայ մեր դասին համար նկատուիլ անթոյլատրելի շռայլութիւն: Բայց մարմինը պէ՛տք է սնուցանել, պահել ու խնամել: Այլապէս, ան կը դառնայ իր պահանջներուն մէջ բռնակալ ու վրիժառու: Ես ճանչցայ այդ վրիժառութիւնը, շատ սուր կերպով, անցեալ տարի, եւ արհամարհանքիս մեղքը քաւեցի Թրոտտսի⁴¹ բարձունքին վրայ, բացարձակ անգործութեան եւ մարմինի պահանջներուն հլու հպատակումի մը դատապարտելով ինքզինքս: Այս վերջինը՝ միջանկեալ:

Կարելոքը այն է որ չորս տարիէ ի վեր հոս եմ, ու չեմ ունեցած տանելի կեանքի մը համար նիւթական ապահովութեան հանգիստը գոնէ: Եւ ո՛չ միայն մաշած է նախորդ տարիներէն մնացած պզտիկ խնայողութիւնս, այլ եւ ճանչցած եմ պարտատիրոջ՝ պահանջող աչքերուն նայելու տառապանքը: Պարագաներու հանդէպ իմ պարտականութիւններս, ո՛չ թեթեւ արդէն, կը ծանրանան հետզհետէ: Հասկնալի է, կարծեմ, որ այս պայմաններուն տակ նիւթական նկատումը տեղ մը գրաւէ հաշիւներուս մէջ:

Անցեալ ամառ, բարեկամի մը յանձնարարութեամբ, Երուսաղէմի Terra Santa College-ի⁴² տնօրէնութենէն հրաւեր մը ստացայ, շատ գոհացուցիչ պայ-

մաններով, պաշտօնավարելու համար իբրև ուսողութեան ու գիտութիւններու ուսուցիչ: Հարկադրուեցայ մերժել, որովհետեւ, բացի ուրիշ նկատումներէ, կար այն իրողութիւնը թէ արդէն պայմանաւորուած էի Հաստատութեան հետ: Իմացուցի իրենց (Հաստատութեան մարդոց) այս պարագան, եւ խնդրեցի որ այս տարի գոնէ յաւելում մը ընեն բոշակիս վրայ: Ուզեցին մերժել այդ յաւելումը, ու ես չստորագրեցի պաշտօնավարութեան յանձնառագիրը: Այս ամառ ես ինքս դիմում կատարեցի Երուսաղէմ, բայց տակաւին պատասխան չեմ ստացած: Պատասխանին դրական ըլլալու պարագային, պիտի չկարենամ հեռանալ Հաստատութենէն, առանց՝ դասալիք եղած ըլլալու ցաւցնող գիտակցութեան. բայց, կը մտածեմ թէ, պիտի հարկադրուիմ ընել այդ ընտրութիւնը, եթէ շունենամ շատ սիրուած ու յարգուած քանի մը բարեկամներու համարումին մէջ իմ տեղս կորսնցնելու վախը:

Ահաւասիկ այս մտահոգութիւնն է որ ինձի գրիչ բռնել կու տայ հիմա, ձեզի գրելու համար: Շա՞տ եմ մեղադրելի, եթէ նիւթական նկատումներով հեռանամ Հաստատութենէն, որուն պաշտօնական մքնդորտը ոչինչ ունի գրաւիչ ինձի համար, բայց որուն մէջ ունեցած իմ գործս ստեղծած է հոգեկան ու մտաւոր կապեր, գորս պիտի չկարենամ քօթափել, առանց էութենէս թանկագին մաս մը կորսնցուցած ըլլալու վիշտին:

Կը խնդրեմ որ գրէք ինձի այս մասին, անկեղծօրէն ու սրտաբաց, նկատի ունենալով միշտ թէ համեստ է պահանջքը զոր կը մերժեն, մինչ նոյն Հաստատութեան մէջ ուրիշներ, չարաչար ու աղիտալիօրէն անարժան, կը յղփանան: Նիւթականը պատրուակ մըն է իրենց համար: Անբաղձալին՝ անճկելի իմ նկարագիրս է, անդրդուելի այն արդարամտութիւնը, որ յաճախ լուռ բայց ցաւցնող յանդիմանութիւն մըն է իրենց մեղապարտ շարժումներուն դէմ:

Ներեցէք նամակիս այս բովանդակութեան եւ հաճեցէք ընդունիլ, կնոջս⁴³ եւ իմ կողմէ, հիացումի ու յարգանքի մեր անայլայլ զգացումները:

Ջերմ սիրով՝

Վահէ-Վահեան

Ձ.

Բրուորնօ, 9 Մեպտ. 1939⁴⁴

Սիրելի Պրն. Վահան Թէքեան,

Երէկ ստացայ ձեր 29 Օգոստոս թուականով նամակը: Խորապէս շնորհակալ եմ ձեզի՝ քերթուածիս մասին գրած ձեր ոգեւորիչ խօսքերուն եւ կարգ մը տողերու նկատմամբ ըրած օգտակար դիտողութիւններուն համար:

Սիրով նկատի պիտի առնեմ այդ տողերը եւ սրբագրեմ զանոնք՝ քերթուածը հրատարակութեան տալէ առաջ, եթէ շատ գէշ ու ծանր այս օրերուն ներելի է տակաւին որ մտածենք քերթուածի ու հրատարակութեան մասին: «Ճէպէլ Մուսան», կ'ըսէք, «վստահօրէն ձեր լաւագոյն քերթուածն է եւ կը յայտնէ յաւելում մը ուժի, շունչի»: Եթէ ժամանակն ու պարագաները ներեն, պիտի ջանամ որ չմնայ անիկա իմ լաւագոյն քերթուածս:

Չօնն ալ կը փոխեն, ինչպէս կը փափաքիք⁴⁵: Միայն, գիտցէք թէ ձեր շափղեն քալող եւ ձեզմէ ներշնչողներուն համար երբեք խրախուսիչ չէ, երբ, ակնարկելով մեր posterité-ին ձեր մասին կատարելիք դատաստանին, կ'ըսէք՝ «հիմա բոլորովին անտարբեր կը թողու զիս, սիրոս բնաւ չի տարցնէր այլեւս...»⁴⁶: Որքա՛ն անելի իրաւացի պիտի ըլլար նման զգացում մը մեզի՝ սեւ օրերու զաւակ ու ապաժառանգ նորերոս համար, բայց եւ որքա՛ն աղետալի՛ նոյն ատեն: Դուք պէտք է եւ իրաւունք ունիք որ նայիք վաղուան, գալիք սերունդներու դատաստանին, հանդարտ ու ապահով գոհունակութեամբ մը եւ վայելէք երանութիւնը՝ տաղանդով բայց նաեւ տաժանքով շահուած այդ ապահովութեան: Ո՛չ ժամանակն է եւ ոչ ալ տեղին է հիմա խօսելու այդ մասին անելի երկար: Եթէ այսօր ցաւալիօրէն ստուերածուած միտքի ու սիրտի գեղեցկութիւնները օր մը վերստին հաստատեն մարդկային կեանքին մէջ իրենց իրաւունքը, ապահովաբար, դուք պիտի ըլլաք մէկը մեր ամէնէն անելի իրաւացի պարտապահանջներէն:

Վստահ եմ, ուրախ պիտի ըլլաք լսելով թէ յառաջիկայ տարուան իմ պաշտօնավարութեանս խնդիրը կարգադրուեցաւ ինձի համար գոհացուցիչ ու պատուաբեր կերպով մը: Մօտաւորապէս երկու շաբաթ առաջ, դիմեցի Տնօրէնութեան որ չորս տարուան պաշտօնավարութեանս մասին հաճի վկայագիր մը տալ, քանի որ կը պահանջուէր դուրսէն: Իբրեւ պատասխան, [Կիրակոսեանը] գրեց թէ կ'ուզէր տեսակցիլ ինձի հետ: Տեսակցեցանք, եւ համաձայնեցայ որ նախորդ տարուան թոշակիս վրայ ամսական երկու ոսկիի «յատկացում» մը ըլլայ: «Յաւելում»ը կրնայ շփացնել եւ մեծերուն ու պարզ ուսուցիչի մը միջեւ յարգալիր անջրպետը վտանգելու բնոյթ ունենալ: Ինձի համար ձեր չէր կարեւորը, կը բաւէր որ նիւթական հոգս նուազէր:

Երէկ, նոյն խնդրին մասին Պրն. Չօպանեանէն⁴⁷ ալ ստացայ նամակ մը: Անոր ալ գրեր են որ թեկնածուներ յանձնարարէ, եւ ան ալ ձեզի պէս թելադրեր է Տնօրէնութեան եւ Պրն. Մալեգեանին⁴⁸ ալ գրեր է որ համաձայնին ինձի հետ: Կը տեսնէք թէ շատ պատճառներ ունիմ շնորհակալ ըլլալու բարեկամներու: Ուրախ եմ այսպէս կարգադրուելուն համար: Կրնայի Պաղտատ երթալ, հակառակ փափաքիս ու բոլոր նախասիրութիւններուս:

Յարգալիր բարեւներ ձեզի՝ կնոջս եւ իմ կողմէ:

Ջերմ զգացումներով,

Չերդ՝

Ս. Ապտալեան

Է.

Նիկոսիա, 29 Մարտ 1940

Միրելի Պրն. Վահան Թէքեան,
Գահիրէ

Մտացած եմ Տիկ. Աւետիսեանի միջոցով դրկած ձեր նամակը⁴⁹: Կնոջս եւ իմ կողմէ կը յայտնեմ սրտագին շնորհակալութիւններ՝ մեր Յոլակին⁵⁰ ծննդեան առթիւ ձեր շնորհատրութիւններուն եւ մաղթանքներուն համար: Կը

մեծնայ Յոլակը, եւ իրեն հետ կը մեծնայ մեր յոյսը՝ այլապէս այս տխուր ու ժլատ կեանքին վրայ ու կեանքէն:

Այս բաները ըսելու համար չէր, սակայն, որ սկսայ գրել այս տողերը: Աճապարանոտ այս նամակը՝ մասնատրաբար «Շահան Շահնուրի համար»⁵¹: Կարդացի ձեր խմբագրականները. կարդացիք քանի մը բարեկամներ միասին: Հաստատութեան մէջ ձեռնարկեցինք նուիրահաւարութեան մը, եւ գոյացած արդիւնքէն Ա[նգլիական] Ո[սկի] տասը (£10-0-0) երէկ իսկ տնօրէնութեան միջոցով դրկեցինք Հ.Բ.Ը. Միութեան տեղւոյդ Շրջանակային Կեդր. Վարչութեան, ձեզի յանձնելու խնդրանքով: Նուիրահաւարութեան սկսանք նաեւ Նիկոսիոյ քաղաքին մէջ: Արդիւնքը տակաւին յայտնի չէ: Յաջորդ նամակովս կը հասցնեմ գոյացած գումարին մնացած մասը եւ նուիրատուներու ցանկը:

Աճապարանքս չ'արտօմեր անդրադառնալ Շահնուրի կացութեան առջեւ ունեցած զգացումներու: Եւ արդէն ատելորդ է գրեթէ: Չեր խմբագրականները ըսած են այդ առիթով ըսուելիք ամէն բան, եւ լա՛ւ ըսած են: Կ'ուզեմ, սակայն, գրել Շահնուրին, եւ կը խնդրեմ որ բարի ըլլաք իր հասցէն դրկել ինձի: Կրնամ իր գիրքերէն առ նուագն երեսունական օրինակ սպառել այստեղ: Դիւրութիւն ունի՞ հիմա ուզուած այդ գիրքերը դրկելու:

Եթէ իր մասին նոր տեղեկութիւններ ունենաք, մանաւանդ յուսադրիչ լուրեր, հաճեցէք թերթով կամ այլապէս տեղեակ պահել մեզ⁵²:

Շատ բան ունիմ ձեզի գրելիք, բայց կը թողմ յարմար առիթի մը: Վերջերս ես ալ երկու շաբաթ անկողին մնացի: Բ. եռամսեայ քննութիւններու թուրքերը դիզուած են ու կը մնան: Արդիւնքները հաղորդելու համար նշանակուած ժամանակը անցաւ, բայց ես հազիւ կէսն են սրբագրած իմ թուրքերու:

Սիրոյ եւ յարգանքի զգացումներով,

Չերդ

Ս. Ապտալեան

Ը.

S. Abdalian
P.O.Box 407
Nicosia

Նիկոսիա, 19 Ապրիլ 1940

Սիրելի Պրն. Վ. Թէքեան

Ստացայ ձեր 3 Ապրիլ բուակիր նամակը եւ «Արեւ»ի մէջ կարդացի նամակիս առիթով գրածնիդ⁵³:

Կը ցախիմ որ խոստացած նամակս ստիպուեցայ ուշացնել: Այսօր ալ թերի է անոր բովանդակութիւնը: Կրնամ դրկել միայն Հաստատութեան մէջ կատարուած նուիրահաւարութեան մասնակցողներու անուանացանկը: Քաղաքին մէջ ձեռնարկը կ'ընթանայ դանդաղ. նկատի առնուած բոլոր անուններուն չէ ներկայացուած տակաւին պատրաստուած թուրքը: Կը խոստովանիմ թէ ես

ինքս ալ չկրցայ հարկ եղած ժամանակը տրամադրել գործին: Անտանելիօրէն զբաղած եմ դպրոցական ընթացիկ գործերովս:

Հաստատութեան մէջ գոյացած է £11-15-0, որուն տասը ոսկին դրկած ենք, իսկ մնացած՝ £1-15-0-ին կը միացնենք քաղաքէն գոյացած գումարէն £ 5-5-0, եւ ընդամէնը եօթը անգլ. ոսկի կը դրկենք ձեզի՝ նախորդ ձեռովը: Պիտի ջանամ յառաջիկայ քրթատարով դրկել քաղաքէն մասնակցողներուն անուանացանկը եւ գոյացած արդիւնքին մնացած մասը: Ներեցէք այս յապաղումին համար:

Շահնուրին չկրցայ գրել տակաւին, բայց պիտի գրեմ: Երանի թէ քանի մը ծառայէր՝ ուշացած այս համակրութիւնը: Պիտի ջանամ իր գիրքերէն ստանալ կրնամ բաւական մեծ քիով սպառել այստեղ: Տեղեկութիւն մը ունի՞ք իր մասին: «Արեւ»ի ընթերցողները կը սպասեն լուրի:

«Արեւ»էն տեղեկացայ թէ նորէն անհանգստութիւն մը ունեցեր էք⁵⁴: Կը յուսամ թեթեւ քան մըն էր եւ անցուցած էք արդէն: Հոգ տարէք դուք ձեզի՝ ձեզի համար ու մեզի, ձեզ ճանչցողներուն ու սիրողներուն համար:

Ուրախ եմ որ հասներ էք քերթուածիս, «Սիոն»ի մէջ հրատարակուած⁵⁵:

Գէշ նամակ մը եղաւ: Ներեցէք որ վերջացնեմ: Կնոջս եւ իմ կողմէ սիրալիկ բարեւներ: Պաշտօնակիցներս ալ փոխադարձաբար կը բարեւեն ձեզի:

Առողջութեան սրտագին մաղթանքներով,
Չերդ՝

Ս. Ապտալեան

Թ.

Նիկոսիա, 24 Մայիս 1940

Սիրելի Պրն. Վահան Թէքէեան,

Աններելիօրէն ուշացուցի նամակս: Կ'ամչնամ յանցանքի մը համար որ սակայն իմս չէ:

Շահնուրի համար ժամանակին խօսեցայ Նիկոսիոյ քաղաքէն մէկ երկու բարեկամներու, եւ ուզեցի հետաքրքրել զիրենք: Ոմանք խանդավառութեամբ եւ յօժարեցան իրենք ալ սկսիլ նուիրահատարութեան: Պրն. Միտերեանը⁵⁶ շատ օգտակար եղաւ սկիզբները, բայց յետոյ ցանկը յանձնել էր մէկու մը որ առատաձեռն ու ջրարբի խօսքեր շատ շռայլեց, բայց տակաւին ո՛րեւէ արդիւնք չտեսանք իրմէ, զանազան պատրուակներով ցանկը մէկ ամիս քովը պահելէն ետքն անգամ: Եթէ ժամանակ եւ յարմարութիւն ունենայի զբաղելու, զիտեմ թէ ատելի ներկայանալի արդիւնք մը կարելի կ'ըլլար ապահովել: Հիմա քաղաքէն հարաքուած գումարը հասած է վեց ոսկի 13 շիլինգի, եւ ստիպուած ենք վերջացնել ցանկը: Այդ գումարէն հինգ ոսկի հինգ շիլինգ դրկեցի ձեզի նախորդ նամակովս, մնացած մէկ ոսկի ութ շիլինգ ալ նախկին միջոցով կը դրկեմ եւ նուիրատուներու ցանկն ալ կը ներփակեմ, փակելով այստեղի նուիրահատարութիւնը, որ չտուաւ յուսացած արդիւնքս:

Չեր խմբագրականները, ազգային խնդիրներու մասին մանաւանդ, կը կարդամ հիացումով: Արդիւնքին մասին կարելի չէ գուշակութիւններ ընել,

քայց գիտեմք թէ պէտք էր շաշեցնել խարազանը՝ այն ձեռով ու ոգիով որ ձերն է: Մտածողներ ըլլան թերեւս թէ աշխարհը յուզող մեծ հարցերուն քով՝ շափազանց պզտիկ են մեր ներքին ցաւերը, եւ անժամանակ է անոնցնով զբաղիլ: Համաձայն են ձեզի, երբ դուք տարբեր կը տեսնէք ու կը խորհիք:

Յառաջիկայ տարուան պաշտօնավարութեանս մասին ցարդ ոչինչ գիտեմ յստակ: Եւ այս անորոշութիւնը կը մտահոգէ զիս: Բաւական բազմանդամ ընտանիքի մը ամբողջ հոգը կը ծանրանայ վրաս: Անցնէ՛ր սա փոթորիկը՝⁵⁷ եւ գիտնայինք թէ ո՛ր ենք եւ ինչ կրնանք ընել:

Կնոջս եւ իմ կողմէ սրտագին բարեւներ:

Յարգանքով ու սիրով,

Ս. Ապտալեան

Ցանկ

Նիկոսիոյ քաղաքէն՝ Շահան Շահնուրի համար կատարուած նուիրահատարութեան մասնակցողներու.-

1. Տիար Տիգրան Ուզունեան	£1-0-0
2. Տիար Գեորգ Մեհրեան	£1-0-0
3. Տիար Հայկ Ուզունեան	£0-10-0
4. Տիար Վահրամ Լեւոնեան	£0-15-0
5. Տիար Սեդրակ Կէպէնլեան	£0-10-0
6. Տիար Մուշեղ Պետլեան	£0-10-0
7. Տիար Պերճ Սամսրունի	£0-10-0
8. Տիար Մ. Շաքարեան	£0-10-0
9. Ոմն	£0-10-0
10. Ոմն	£0-7-0
11. Տիար Մանուկ Բարիքեան	£0-5-0
12. Ոմն	£0-3-0
13. Ոմն	£0-3-0

Գումար £6-13-0

Ժ.

4 Յունուար 1944

Սիրելի Պրն. Վահան Թեքեան

Աններելիօրէն ուշացայ գրելու ձեզի թէ ստացած են «Հայերգութիւն»էն⁵⁸ ձեր ինձի նուիրած օրինակը, եւ վերանորոգուող ու խորունկ հիացումով մը կարդացած են զայն լեցնող՝ ինձի արդէն մտերիմ կամ բոլորովին անձանօթ քերթուածները:

Ընծայական ձեր համակրալիք ու գնահատական բառերը եթէ կը լեցնեն զիս անմեղ հպարտութեամբ մը, կ'առաջնորդեն նոյն ատեն այն ցաւալի մտածումին թէ արժանի՞ են անոնց, պիտի կարենա՞մ արդարացնել անոնցնով թե-

լաղրուած յոյսերը, կամ հաստատել այն պարտքը գոր անոնք կը դնեն ին վրաս:

Իմաստակութիւն թող չհամարուի եթէ ըսեմ թէ ձեր այս հատորին հրատարակումովը՝ ձեր ամբողջական քերթուածներուն վերահրատարակման մասին ունեցած իմ ծրագիր փափաքիս մէկ մասին իրականացումը կը տեսնեմ:

Առանց տաղանդի որակի կամ մեծութեան ու պզտիկութեան անհարկի հարցեր յարուցանելու, ինծի համար ամէն վերապահումէ ու տարակարծութենէ վեր իրողութիւն մըն է, թէ ո՛չ մէկ բանաստեղծ, մեր հին ու նոր ամբողջ գրականութեան մէջ, տուած է գործ մը այնքան համապարփակ ու լրիւ, որքան ձերինն է: Եւ հունձքին այս նկարագիրը արդիւնքն է ո՛չ միայն «ազնիւ սերմին», այլ՝ գուրգուրացող մատներով խղճամիտ պարտիզպանին՝ լայն ժամանակի մը վրայ երկարող յարատեւ ու ներշնչեալ ջանքերուն: Անհատական կեանքի մասնաւոր շրջաններէն, հոգեկան կամ զգացական ապրումներու առանձնացումը պահերէն, նոյնիսկ հին ու նոր մեր պատմութեանց դրուագներէն ու տազնապներէն կամ մեր հաւաքական յուզումներէն եւ խտւայներէն՝ կան սքանչելի սետուումներ մեր գրականութեն մէջ: Եւ, ինչպէս ամէն մարդ գիտէ, անոնք կը կազմեն ինքնայատուկ նկարագիրը՝ այլապէս վիրատոր ու թշուա՛րայց գեղեցիկ շնորհներով փայլուն մեր գրականութեան: Կա՛ն, եւ մեր հայատութիւնն ու հարստութիւնն են անոնք: Բայց իմ համոզումս է թէ ո՛չ մէկ անհատ հայ բանաստեղծի երկերուն մէջ ներկայ են *մարդը*, մանկութենէն մինչեւ իմաստութեամբ բեռնաւոր տարիքի լիութիւն, եւ մեր *ժողովուրդը*՝ զոնէ անոր յառաջաւոր տարրը՝ ժամանակի նոյն տեսողութեան մէջ ինկող զգացական եւ իմացական իրենց բոլոր դիմայեղումներովը, այնպէս հարազատ ու բարախուն, ինչպէս են անոնք ձեր բանաստեղծութիւններուն մէջ: Տեղը չէ ծաւալելու եւ զոնէ ինծի համար անվիճելի ճշմարտութեան մը համագօր այս երեսոյթին պատճառները որոնելու կամ բանաձեւելու: Երջանիկ այն իրողութիւնը թէ թոյլատրուեցաւ ձեզի ապրիլ զոնէ տեսողութեամբ լրիւ եւ մարդկային բնական հանգրուանները ընդգրկող կեանք մը, եւ այն միւս անուրանալի իրողութիւնը թէ այդ կեանքը տեսաւ, զգաց ու ապրեցաւ, մեր ժողովուրդին եւ ամբողջ մարդկութեան հետ, մեծ յոյսերու եւ յուսախաբութիւններու, անկումներու եւ փլուզումներու եւ վերստին յոյսերու իրերայաջորդ խռովքները, կրնան երեսոյթը լուսաբանող բացատրութիւններ ըլլալ, բայց ո՛րեւէ կերպով չեն ազդեր անոր արժէքին եւ ո՛չ ալ կը մեկնեն զայն ամբողջութեամբ: Իրողութիւնը կը մնայ իրողութիւն: Եւ որովհետեւ այդպէս է, ձեր ամբողջական քերթուածները, երջանիկ օր մը, պէտք է որ հրատարակուին նիւթի, հոգեյատակի, մարդկային կեանքի մասնաւոր շրջաններէն ու խռովքներէն նուաճումներու հիման վրայ կատարուած նոր եւ բազմախնամ դաստորումով մը: Ժամանակագրական կարգը եւ կամ հրատարակուած ձեր հատորներուն մէջ արդէն որդեգրուած՝ հասկնալիօրէն շատ թոյլատու ընդհանրացում ենթադրող խմբաւորումները անբաւական են անոնց լիակատար ըմբռնումին ու ըմբռնչխնումին: Կը վախ-

նամ թէ չկրցայ յստակ ըլլալ: Բայց կը կրկնեն թէ «Հայերգութիւն»ը որպէս յղացում կը համապատասխանէ իմ ծրագիր փափաքիս մէկ մասին:

Շատեր գրեցին ձեր այս նոր հատորին մասին, շատ արժեքատուր եւ իրաւ, գուցէ նաեւ հասարակ ու անտեղի բաներ: Նպատակս չէ հիմա իմ հասկցած ձեռնարկ վերլուծումը ընել անոր բովանդակութեան, եւ ո՛չ ալ նոյնիսկ սեղմ տողերու մէջ տալ իմ տպատրուրիսնս անկէ: Կ'ուզեմ միայն ըսել թէ, ինչ որ մինչեւ հիմա խօսած ու գրած եմ ձեր գրականութեան մասին, կը ներկայացնէ միայն աննշան մէկ կոտորակը զգացածիս ու մտածածիս, եւ այդքանն իսկ ո՛չ բոլորովին հարազատօրէն: Չեմ յաւակնիր թէ օր մը կրնամ ներկայացնել ձեր գրականութիւնը՝ նիւթը սպառելու չափ ամբողջականօրէն: Բայց կը հաւատամ թէ ունիմ ըսելիքներ որոնք կրնան առնուազն աւելորդ չըլլալ, եւ յոյս ունիմ թէ պիտի կարենամ ըսել զանոնք օր մը, գրականութեան դասերուս ներջանակէն դուրս, աւելի մեծ թիով հետաքրքիրներու համար:

«Արեւ»ի մէջ լոյս տեսած թղթակցութենէ մը իմացայ թէ «Հայ Գրագէտներու Բարեկամներ» անուանով խմբակը⁵⁹, ձեր նախագահութեամբ, իր հարցումներէն մէկը յատկացուցեր է անձիս եւ հրատարակութիւններուս քննութեան: Յայտնուած կարծիքներէն անկախաբար, ձեռնարկը, զայն ընդունելով ընծայուած ուշադրութեան մը ապացոյցը պարզապէս, շատ կը համարեմ ինձի համար, ու կը տատապիմ՝ ստեղծուած համարումին չկարենալ հաւասարելու տարակոյտ մը: Այս զգացումը, սակայն, չ'արգիլեր ինձի որ Պրն. Հ. Ժամկոչեանին⁶⁰ այդ առիթով յայտնած գաղափարներուն հիմնովին անճիշդ ըլլալը ըսեմ այստեղ: Ընդհանրապէս արժանի կամ անարժան՝ երեսն քերուած համակրանքին, անկեղծ շնորհակալութեան զգացում մը ունիմ բոլոր անոնց հանդէպ որ այդ իրիկուն մտածեր ու խօսեր են իմ մասին:

Ինձմէ շատ վերջը սկսողներ տուին իրենց երկրորդ ու երրորդ հատորները, մինչ ես կը մնամ տակաւին իմ առաջինիս վրայ⁶¹: Եւ ի՞նչ է թէ ունիմ ներկայանալի հատոր մը լեցնելու չափ պատրաստ քերթուած, բայց ո՛չ միջոցը ունիմ հրատարակելու, եւ ո՛չ ալ՝ համարձակութիւնը՝ այս օրերուն: Կ'երեւի պէտք է սպասել աւելի բախտատու ժամանակի մը⁶²:

Նոր հրատարակութիւններու մասին մտածելու առիթով, ներեցէք որ ըսեմ ձեզի իմ ուրիշ մէկ փափաքս: Շատ պիտի ուզէի, որքան որ կարելի է մօտիկ ժամանակի մը մէջ, հատորի վերածուած տեսնել մեր գրական կարգ մը դէմքերը ոգեկոչող ձեր յուշերը⁶³, որոնց մէջ անոնք կ'երեւին շատ աւելի իրական գոյներով ու ձեւերով, կը ներկայացուին շատ աւելի հարազատօրէն, քան կ'ըլլան յաճախ հանդիսատու կենսագրութիւններու մէջ:

Կ'նոջս եւ իմ կողմէ սրտագին շնորհատրութիւններ Նոր Տարիի եւ Ծնունդի առթիւ, եւ ձեր գլխատրութեամբ Հայրենիք վերադարձի մաղթանքներ՝ բոլոր անոնց համար՝ որ կը սիրեն մեր մշակոյթը, մեր Երկիրը եւ անոր հերոսական ժողովուրդը իր մարդկայնական իտեպներով ու շքեղ մաքառումներով:

Եթէ տեսնէք Պրն. Ա. Պատրիկը⁶⁴, կը խնդրեմ որ իմ բարեւներս հաղորդէք իրեն եւ ըսէք թէ այս օրերուս պիտի գրեմ նաեւ իրեն:

Բարեկամական զգացումներով եւ հիացումով

Յ.Գ. Եթէ կարենամ արտօնութիւն ստանալ, պիտի ներփակեմ մէկ Անգլոսկիի postal order մը, խնդրելով որ հաճիք հասցէիս ողարկել երեք օրինակ «Հայերգութիւն»։ Եթէ ներփակ չգտնէք postal order-ը, հաճեցէք նկատի չառնել ապաստանքը։

Վ-Վ

ԺԱ.

Նիկոսիա, 20 Նոյ. 1944

Սիրելի Պրն. Վահան Թեքեան,

Չեր վերջին նամակը, գրուած Մարտ 7-ին, քանի մը անգամ ձեռք առած եմ պատասխանելու համար, բայց անբացատրելի վարանք մը կեցուցած է զիս։ Թերեւս, ձեզի, ձեր գրականութեան հանդէպ ունեցած պարտքս հատուցած չըլլալու դատապարտիչ գիտակցութիւնն էր ատիկա։ Բայց ես յոյս ունիմ թէ կուտակուած պարտքս պիտի կարենամ լիովին վճարել լայն օրերու մէջ։

Չեր այդ նամակին մէջ կայ փշրուած տրամադրութիւն մը որ կը տրտմեցնէ, կը մտահոգէ զիս։ «Սիրտս կոտրած ու եռանդս մարած է ատենէ մը ի վեր» կը գրէք։ Չեմ կրնար գուշակել, բնականաբար, իսկական պատճառը ձեր վրդովումին, նոյնիսկ Պրն. Շ. Սեյօնքնեանին⁶⁵ տուած կարգ մը տեղեկութիւններէն վերջ⁶⁶։ Բայց գիտեմ թէ իմացական կեանքով ապրող մարդուն համար՝ ջլատիչ մեծագոյն վիշտերէն մէկն է գէշ կամ սխալ հասկցուիլն ու դատուիլը։ Բայց հանրային ու գերագոյն հոգերով տառապող մարդուն անխուսափելի ճակատագիրն է ատիկա, որմէ չեն կրնար զերծ մնալ հազուագիտ ընտրեալներն անգամ։ Ու դուք լա՛ւ գիտէք այդ իրականութիւնը, եւ պէտք չունիք զայն ինձմէ լսելու։ Ուրեմն, հոգիի ու միտքի բանկազին բարեկամ, բոքափեցէ՛ք այդ կործանարար յուսալքումը եւ աշխատեցէ՛ք ձեզի ու մեզի համար, ազգին ու մարդկութեան համար, հայ գրականութեան ու հայ գաղափարին համար, որոնց արի ու արժանատր զինուորը եղաք միշտ։

Առանց ձեր եւ իմ միջեւ բաղդատութիւն թելադրելու սնափառութեան, ըսեմ թէ, կը հասկնամ ձեր ցար, որովհետեւ ինձ ցան ալ է ան։ Ո՛չ մէկ ատեն լիովին ըմբռնուած եմ, բայց եւ ո՛չ մէկ ատեն այնքան գէշ ու սխալ մեկնած եմ գաղափարներս, խօսքերս ու գործերս, եւ այնքան անսրտօրէն դատափետած եմ զիս, որքան այս օրերուս, ուր ճշմարիտ հալածանք մը շրթայագերծուած է ինձի հանդէպ, նոյնիսկ ամէնէն անսպասելի անկիւններէ։ Սակայն կան որ կը հասկնան զիս ու կը համակրին ինձի, եւ մխիթարութիւն մըն է ատիկա։ Բայց ես իմ սնուցիչ ոյժս կ'առնեմ մանաւանդ այն համոզումէն թէ առողջ, օգտակար ու բարի են դառանանքս ու դիտաւորութիւններս, եթէ նոյնիսկ վրիպանքներէ զերծ չըլլամ իբրեւ սահմանաւոր էակ։ Մարդերու փոքրութիւնը, եսակեդրոն նեղմտութիւնը կը տառապեցնեն զիս։ Բայց ա՛յդքան միայն, չեն կրնար բնաւ յուսալքել զիս ու ձեռնբափ ընել։ Կատաղօրէն կը սիրեմ մարդը, նոյնիսկ իր անկումներուն մէջ, եւ հաւատք ունիմ իր վաղուան վրայ։ Յնորատեսութիւն

չէ այդ հաւատքը, ներշնչուած ըլլալով յուսադրիչ երեւոյթներէ, որոնց լոյսը կը հասնէր ինձի, զանոնք պատող քանձը մշուշին փարատիլ սկսելէն ալ առաջ:

Այս ամառ, իմիններուս վեհանձն գոհողութեամբ, կրցի ամսուան մը արձակուրդ առնել եւ առանձնանալ Բրտորոմօ: Կը ներփակեմ հոն գրած քերթուածներէս մէկը⁶⁷, ուր ջանացած եմ դնել մաս մը հոգիիս խռովքներէն ու հաւատքիս լոյսէն: Կը խնդրեմ որ խստասիրտ ոգիով մը կարդաք զայն ու գրէք ինձի ձեր տպատրուրթիւնները, որոնց ամէնէն աւելի կշիռ կու տամ:

Թերեւս մամուլէն կամ ուրիշ աղբիւրներէ իմացած էք թէ քանի մը գաղափարակից բարեկամներու հետ հիմնած ենք «Հայաստանի Բարեկամներու Միութիւն» անունով կազմակերպութիւն մը⁶⁸: Այդ Միութեան շուրջ պատրաստուած թղթակցութենէն մէկական օրինակ, Սեպտեմբեր 11 թուակիր բացատրողական նամակներով, դրկեցինք «Արեւ»ին⁶⁹, «Յուսաբեր»ին⁷⁰, «Չարթօնք»ին⁷¹, «Ժողովուրդի Չայն»ին⁷²: Բացի «Արեւ»էն, բոլորն ալ հրատարակեցին զայն: Չեմ փորձեր, առանց ստոյգ տեղեկութեան, կանխակալ դատումով մը մեկնութիւն տալ այդ երեւոյթին, սակայն հետեւութիւնը որ անխուսափելիօրէն հանեցին շատեր, եւ ամէնէն բարեմիտները անգամ, ո՛չ «Արեւ»ին եւ իր շրջանակին եւ ո՛չ ալ մեր Միութեան համար նայաստատու է: Հոկտ. 29 թուակիր երկրորդ թղթակցութենէ մը եւս դրկած ենք օրինակ մը «Արեւ»ին, եւ կը յուսանք թէ այս անգամ լոյս պիտի ընծայուի ան, եթէ գոյութիւն չունի մասնաւոր նկատում մը՝ հիմնուած՝ անճիշդ ու մոլորեցնող ցուցմունքներու վրայ: Ներփակ կը դրկեմ օրինակ մը՝ հոս մեր անդամներուն համար հանուած շրջաբերականէ մը, ուր կան բացատրողական տողեր Միութեան ոգիին ու ձգտումներուն մասին: «Արեւ»էն քաջալերանք միայն կը յուսանք մենք:

Կինս կը փափաքի որ հաղորդեմ ձեզ իր ջերմ համակրանքն ու յարգանքը:

Չեր անձին ու տաղանդին հանդէպ հիացումով ու միշտ սիրալիք զգացումներով,

Չերդ՝

Վահէ-Վահեան

1.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՄ ՄԻՈՒԹԻՒՆ

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԹԻՒ 1

28 Սեպտեմբեր, 1944

Փոստարկղ 413, Նիկոսիա

Հայաստանի Բարեկամներու Միութեան Անդամներուն

Սիրելի Բարեկամներ,

Յարդ կարելի չեղաւ ապահովել մեր Միութեան յատուկ հաւաքավայր մը, ուր, պարբերաբար գումարուած հաւաքոյթներու ընթացքին, Գործադիր Վար-

չութիւնը առիքն ունենար անդամները տեղեակ պահելու իր գործունէութեան, քելադրութիւններ լսելու եւ ընելու, եւ լուսաբանութիւններ տալու Միութեան էութեան ու ձգտումներուն, ուղեգիծին ու ոգիին, կամ յարակից ա՛յլ հարցերու շուրջ:

Այդ պակասը լրացնելու մտահոգութեամբ, Գործ[աղիք] Վարչութիւնը որոշած է Միութեան անդամներուն ուղղել պարբերական շրջաբերականներ: Մեր ներկայ շրջաբերականը, առաջինը իր տեսակին մէջ, նպատակ ունի՝ ա) Ներկայացնել Միութիւնը գոյութեան կանչող պատճառները, անոր էութիւնն ու ոգին, բ) Բացատրել անոր անունին տարողութիւնն ու քելադրութիւնները, գ) Ներկայացնել համառօտ տեղեկատուութիւնը Վարչութեան ցարդ ունեցած գործունէութեան:

Ա. Մեր Միութիւնը ծնունդն է կենսական պէտքի մը, որ մինչեւ վերջերս եքէ կը զգացուէր տարտամօրէն միայն, գրեթէ բնագոյականօրէն, ներկայ ժամանակներու ընթացքին տեղի ունեցած մեծ դէպքերու ու անոնց հետեւանքով ժողովուրդներու եւ ազգերու փոխ-յարաբերութիւններուն մէջ առաջ եկած շրջափոխութեան լոյսին տակ, հետզհետէ դարձաւ գիտակից ու անյետաձգելի պահանջք մը: Մեր Մայր Երկիրը, հոն ապրող եւ ստեղծագործող ժողովուրդը, անոր իտէլայներն ու նուաճումները ճանչնալու պէտքն է ատիկա: Այդ Երկիրէն, անոր պետական ու ռազմական, տնտեսական ու մշակութային կեանքէն ծաւալող մեր գորութենէն հաղորդուելու եւ անով մեր պանդուխտի կեանքը յուսալից ձգտումներով ոգևորելու կարիքը: Ու դարձեալ, նոյն այդ Երկրի մեր եղբայրներուն ու քոյրերուն հերոսական ճիգերուն հանդէպ մեր հեռաւոր բայց հարազատ համակրութիւնը յայտնելու, եւ անոնց հսկայական նուիրաբերումին մէջ մեր շատ համեստ սակայն սրտագին մասնակցութիւնն ունենալու իրաւունքն ու պարտականութիւնն են այս Միութիւնը գոյութեան կանչող պատճառները:

Մեր Միութիւնը չէ՛ ու չի կրնար ըլլալ երբեք անկողոր յաւելում մը՝ կղզիիս մէջ արդէն գոյութիւն ունեցող հայ կազմակերպութիւններու քիւին վրայ: Այդ կազմակերպութիւնները ունին իրենց ուրոյն նպատակներն ու գործունէութեան ուղեգիծերը, շատ բնականօրէն տարբեր մերինէն, որովհետեւ կոչուած են վերը պարզուած կէտերէն տարբեր պահանջքներու գոհացում տալու: Ուրեմն, որեւէ ուրիշ կազմակերպութեան գործունէութիւնը խաչածեւելու եւ ուժերու ջլատում առաջացնելու մտավախութիւն մը մեր Միութեան հաշուոյն՝ անտեղի է ու կանխակալ: Անիկա չի սնուցաներ մրցակցութիւն կամ հակամարտութիւն՝ ուրիշ հաւաքական ձեռնարկներու հանդէպ, ընդհակառակը, եղբայրօրէն կը գործակցի անոնց [հետ], երբ իր առաջադրութիւններէն մաս մը գոնէ նոյնացած տեսնէ անոնց մէջ: Իր մասնաւոր սահմաններուն մէջ, գերազանցօրէն հայրենասիրական բնոյթով կազմակերպութիւն մըն է մերինը, որ իր հաւատաւոր անդամ-անդամուհիներէն կը պահանջէ սէր, նուիրում, եւ աշխատանք: Կը փափաքինք որ ա՛յդպէս ըմբռնուին իր էութիւնն ու ոգին, որովհետեւ ա՛յդ է միայն ճշմարտութիւնը:

Բ. ա) «Հայաստանի Բարեկամներու Միութիւն» կոչուած է մեր Միութիւնը, որովհետեւ իրաւականօրէն պատշաճագոյն բնորոշումը նկատուած է *բարեկամ* բացատրութիւնը: Եւ առիկա՝ նկատի առնելով այն իրողութիւնը թէ անոր անդամակցելու իրաւունք ունին ծնունդով ու հոգիով հայ ու ներկայ Հայաստանը անվերապահօրէն սիրող բոլոր անհատները, թէեւ անոնք կրնան ա՛յլ երկիրներու հպատակութիւն ունենալ: Այդ հպատակութիւնները, շատ իրաւացիօրէն, կը պահանջեն օրինապահութիւն եւ պարտաճանաչութիւն՝ իրենց պատկանեալ երկիրներուն հանդէպ, բայց չեն արգիլեր որ ենթակաները ունենան իրենց ցեղային ու զգացական համակրութիւնները (բարեկամութիւնները), եւ այդ համակրութիւնները գործնականօրէն արտայայտելու համար՝ քաղաքական բնոյթ չկրող կազմակերպութիւնները: Այս իրողութեան ամենէն պերճախօս ապացոյցը՝ այն բարեացակամութիւնն է որով մեր Միութեան կազմութիւնն ու գործունէութիւնը արտօնեց տեղական իշխանութիւնը: Այս հարցին շուրջ այլ կերպ մտածել պիտի նշանակէր կասկածի տակ դնել ժողովրդավար ու ազատամիտ ոգին այն մեծ պետութեան որուն հովանին կը վայելենք այս կղզիին մէջ:

բ) *Բարեկամ* բառը գործածուած է անկասկած իր *բարիք կամեցող* իմաստովը, առանց սակայն անտեղի այն թելադրանքին թէ Միութեան շրջանակէն դուրս մնացող հայերը անպատճառ անբարեացակամ են ներկայ Հայաստանին հանդէպ: Կ'ենթադրուի որ ամէն հայ, առաւել կամ նուազ գիտակցօրէն, *բարեկամ* եղած ըլլայ ներկայ Հայաստանին. բայց այս Միութիւնը միջոց մը պիտի հանդիսանայ որ բիրտեղացած նպատակներու իրագործման ի հաշիւ ոյժ մը գոյացնեն այդ ցան ու ցրիւ, անկազմակերպ *բարեկամները*, աւելի գիտակցօրէն խորացնեն իրենց բարեկամութիւնը եւ գործնականօրէն արտայայտեն զայն: Այս Միութիւնը՝ *ճերմակը սօսիւն*, բարեկամը անբարեկամէն զատորոշելու անօգուտ ձեռնարկ մը չէ բնաւ, ինչպէս կրնան թեթեամտօրէն ենթադրել ոմանք: Չէ, որովհետեւ անիկա իր հաշիւները հիմնած է բարեկամներու գոյութեան վրայ միայն, եւ իր նպատակն է օգտակար արդիւնքներ իրագործել անոնցմով: Եթէ իրապէս կան *սօսիւն*, անոնք կրնան չվրդովիլ, քանզի իրենք հաշիւի չեն առնուած: Միութիւնը կ'անգիտանայ իրենց գոյութիւնը:

Աւելի ծանրանալ այս հարցին վրայ, պիտի նշանակէր շատ օգտակար ժամանակ ու կորով վատնել կէտի մը շուրջ, որ կը սպառնայ ապարդիւն վեճի բնոյթ ստանալ, մինչդեռ անդին անյետաձգելի գործ կայ կատարելիք: Ո՛վ որ բառով մը կը սակարկէ հայրենիքին հանդէպ իր սէրն ու նուիրումը՝ արժանի չէ մեր նկատառման: Բաւական է այսքանը որպէս լուսաբանութիւն:

Գ. Գործադիր Վարչութիւնը, ընտրուած այս Յուլիսի 20-ին, տակաւին չկրցաւ ունենալ շօշափելի գործունէութիւն մը, որովհետեւ անցած երկու ամիսները, ամառնային շրջան ըլլալով, կը ներկայացնէին մեռեալ եղանակ մը հրապարակային գործունէութեան համար, բայց կատարուեցան կարգ մը նախապատրաստական աշխատանքներ. - 1) Կազմութիւն Վարչութեան Դիւանի. Ատենապետ՝ Բարեկամ Ս. Ապտալեան, փոխ-Ատենապետ՝ Բրկմ. Տօքթ. Մ. Զրիչչեան, Ատենադպիր՝ Բրկմ. Գ. Միտեան, փոխ-Ատենադպիր՝ Բրկմ. Ս.

Տեօվլեբեան, Գանձապահ՝ Բրկմ. Յովհ. Վերիլեան, Խորհրդականներ՝ Բրկմ. Մ. Բարիբեան, Բրկմ. Լ. Գոնսուլեան եւ Բրկմ. Գ. Պալեան. 2) Պատկան իշխանութեան տեղեկագրում Վարչութեան ընտրութեան եւ Դիւանի կազմին. 3) Վարձում փոստարկղի, պատրաստում եւ գնում Միութեան կնիքի, նամակագլուխով բուրքի ու պահարանի, ստացագիրի, ատենագրութեան, գանձապահի եւ այլ տետրակներու, անդամակցութեան դիմումնագիրի տպագրեալ օրինակներու եւ ուրիշ գրեմական պիտոյքներու. 4) Միութեան կազմութիւնը հարողող հեռագիրի առաքում ՎՈԿՍ-ի⁷³ Հայաստանի լիազօրին. 5) Առաքում երկու նամակներու, Հայաստան, մէկը՝ բանաստեղծ Ա. Իսահակեանին⁷⁴, եւ միւսը՝ ՎՈԿՍ-ի Հայաստանի լիազօր Մարիա Պետրոսեանին⁷⁵, մշակութային բովանդակութեամբ բազմազան ապսպրանքներով. 6) Հեռագրով հրաւեր՝ ողողում՝ Էջմիածնի ազգընտիր Տեղակալի⁷⁶ Պատուիրակ՝ Բրոֆ. Աշոտ Աբրահամեանին⁷⁷, որ եթէ հնարատրութիւն ունենայ այցելէ նաեւ կղզիիս հայ համայնքը (հեռագրով ստացուած պատասխանը յուսադրիչ է). 7) Միութեան տեղեկատու մարմինին կողմէ պատրաստուած թղթակցութեան մը առաքումը Մերձ. Արեւելքի մէջ լոյս տեսնող չորս հայ թերթերու («Արեւ», «Յուսարեք», «Զարթօնք» եւ «Ժողովուրդի Չայն») հրատարակութեան խնդրանքով. 8) Արձանագրուած մուտքի տուրքերու գանձում. 9) Նախնական պատրաստութիւններ՝ Միութեանս բացման հանդէսը կատարելու յառաջիկայ Հոկտեմբերի կէսին:

Շատ համեստ աշխատանքներ են ասոնք, սակայն Վարչութիւնը ունի այն հաւատքը, թէ Միութեան խանդավառ անդամ-անդամուհիներու քաջալերանքով եւ օժանդակութեամբ, պիտի կարենայ արժեցնել իր վրայ դրուած յոյսերը, իրեն մատչելի բոլոր միջոցներով հետամուտ ըլլալով առաջադրուած նպատակներու իրագործման:

Միքելի՝ բարեկամներ, Հայրենիքի բոլորանուէր սէրը մեր խրախոյսն է, եւ ձեր նուիրումը՝ մեր ապաւենը, գործի մը համար որ նուիրական է:

Բարեկամական սիրով ու յարգանքներով,

Հայաստանի Բարեկամներու Միութեան
ԳՈՐԾԱԴԻՐ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
(Կնիք)

2.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Փոստարկղ 413

Նիկոսիա

Կիպրոս, 11 Դեկ. 1944

Մեծայարգ խմբագիր «Արեւ» Օրաթերթի
Գահիրէ

Յարգելի Տիար,

Չեր թերթին մէջ հրատարակուած տեսնելով մեր Միութեան կողմէ ձեզի ուղարկուած Հոկտ. 29 թուակիր թղթակցութիւնը, կը յայտնենք մեր շնորհակալութիւնը եւ անկեղծ ուրախութիւնը:

Մեր հերոսական Հայրենիքին եւ անոր փառահեղ նուաճումներուն նուիրուած ուղղամիտ ու անվերապահօրէն խանդավառ արտայայտութիւնները որ լոյս կը տեսնեն ձեր թերթին մէջ՝ կ'ոգեւորեն մեզ: Կ'ընդունինք ձեզ եւ ձեր թերթը ճշմարիտ բարեկամն ու քաջալերիչը բոլոր այն ձեռնարկներուն, որոնք մեր Ազգին ու Հայրենիքին սերը եւ անոնց ծառայելու պարտականութեան գիտակցութիւնն ունին իբրեւ ներշնչարան: Մեկնելով այդ համոզումէն, մեր Միութիւնը քաջալերանք միայն կ'ակնկալէ ձեզմէ: Թող ներուի, ուրեմն, որ յայտնենք մեր զարմանքը թէ ինչպէս տեղ կը գտնեն ձեր թերթին մէջ՝ վերջերս՝ Նիկոսիայէն անանուն թղթակիցի մը կողմէ դրկուած թղթակցութեան նման յայտնապէս անուղղամիտ ու խեղաթիւր բովանդակութեամբ գրութիւններ:

Կը ներփակենք նոր թղթակցութիւն մը, Նիկոսիոյ մէջ՝ Նոյեմբեր 29-ի համազգային տօնակատարութեան մասին, եւ կը խնդրենք որ բարեհաճիք նախորդին հանդէպ ցոյց տրուած հոգածութեամբ լոյս ընծայել զայն:

Հայրենակցական սիրով ու յարգանքով,

Ի դիմաց Հայաստանի Բարեկամ(ներու) Միութեան
Գործ[աղիք] Վարչութեան
Ատենապետ Վ[ասն] Ատենադպիրի
Ս. Ապտալեան Մ. Քրիշչեան
(Կնիք)

ԺԲ.

Նիկոսիա, 29 Դեկտ. 1944

Սիրելի Պրն. Վահան Թերեան,

Ստացայ ձեր 5 Դեկ. թուակիր նամակը⁷⁸: Ինչ որ կայ այդ նամակին մէջ որպէս համակրանքի հաւաստում մեր ձեռնարկին հանդէպ, որպէս յանձնարարութիւն, խրատ ու խոստում՝ թանկագին է իմ բարեկամներուս ու մանաւանդ ինձի համար:

Սուրիոյ եւ այդտեղի գիտակից եւ անշահախնդրօրէն հայրենասէր շրջանակներուն ցոյց տուած համակրանքը մեր Միութեան նկատմամբ, եւ այստեղ ժողովրդական լայն խաւերու մէջ ստեղծուած գործօն խանդավառութիւնը՝ սրտապնդիչ քաջալերանքներ են, որոնք կը գօրացնեն մեզ գործի մը մէջ, որուն զեղեցիկ, բարձր եւ օգտակար ըլլալուն համոզումը ունինք: Կան, սակայն, ցաւալի անհասկացողութիւններ ձեր այստեղի ընկերներուն ու մեր միջեւ, հակառակ զանոնք արգիլող բոլոր պատճառներուն, հակառակ՝ բանականութեան բոլոր բախանձանքներուն եւ հակառակ, մանաւանդ, անվիճելի այն նախապայմանին թէ պէտք էր որ միանայինք իրարու հետ, ինչպէս կը գրէք շատ իրաւունքով. «Հայաստանի սիրոյն մէջ»: Այդ անհասկացողութիւնները այնքան զուրկ են գաղափարական ազնւութենէ եւ այնքան զեւոնա-

քարշօրէն փոքր ու անձնական՝ իրենց բնոյթով, որ անոնց անդրադառնալը ցաւ կը պատճառէ ինձի, եւ անկասկած պիտի պատճառէ նաեւ ձեզի: Խնայելու համար ձեզի եւ ինձի՝ պիտի շտամ պարզուած տխուր պատկերը, որուն մէջ, հաւատացէ՛ք, մեր Միութիւնը եւ անոր ղեկավարները չունին բաժին: Երջանկութեամբ կ'ապաւինին ձեր խոստումին. պիտի գաք⁷⁹, պիտի տեսնէք ու լսէք եւ պիտի ընէք ձեր դատաստանը, որուն արդարութեան վրայ հաւատք ունին միշտ: Մինչ այդ, սակայն, ինչ որ կը վերաբերի ձեր յանձնարարութեան⁸⁰, կ'ապահովցնեն ձեզ թէ պիտի ընենք, տրամաբանական սահմանին մէջ, ամէն բան որ կրնայ օգնել հասկացողութիւն մը գոյացնելու:

Քանի մը տող ալ «Արեւ»ին հետ մեր «հրատարակութեան վեճ»ին մասին: Ինչպէ՛ս եղեր է որ «Արեւ»ի խմբագրութիւնը յաջողեր է «սպառնալիք» գտնել նամակի մը մէջ, գոր խմբագրողը ատոր հեռաւոր թելադրանքն իսկ չէ մտադրած դնել հոն: Միրելի՛ Վարպետ, դո՞ւր ալ չնշմարեցիր թէ գործածուած բառը «հետեւութիւն» է եւ ո՛չ թէ *հետեւանք*, որ կրնայ սպառնալիքի շեշտ մը ունենալ⁸¹: Կը մտածէինք թէ «Արեւ»ի մէջ մեր թղթակցութեան չերելիլը՝ անբարեացական շրջանակներու ենթադրել պիտի տար «Արեւ»ի կողմէ անհամամտութիւն մեր ձեռնարկին նկատմամբ: Բան մը՝ որ դժբախտաբար տեղի ունեցաւ հոս, մէկ կողմէ տարակոյսի տակ դնելով այդ թերթին ուղղամտօրէն հայաստանեան ուղղութիւնը, եւ միւս կողմէն՝ զգուշանալի բնոյթով մը ներկայացնելով մեր Միութիւնը: Ահաւասիկ թէ ինչ ունէինք ի մտի, երբ «անբաղձալի հետեւութիւններու» մտավախութիւնը յայտնեցինք: Կը կարծեմ թէ այս լուսաբանութիւնը կը բաւէ, թիւրիմացութեան այդ մասը գոնէ փարատելու: Կը ներփակեմ կարճ թղթակցութիւն մը եւ կը խնդրեմ որ տար «Արեւ»ին հրատարակութեան համար: Այս առիթով, սրտագին կը շնորհաւորեմ ձեզ եւ Պրն. Շ. Սեյժոնբեանը, Նոյ. 29-ի նուիրուած թիւին մէջ ստորագրած ձեր այնքան ուժեղ, խելացի եւ ճիշդ յօդուածներուն համար⁸²:

Եւ հիմա, ձեր խրատին⁸³ ու խոստումին մասին: Կանուխ չծերանալու ձեր ղեղազիրը՝ պատրաստուած՝ ողջախոհութեամբ, ազատամտութեամբ, կեանքն ու մարդիկը խորապէս ճանչցած մարդու իմաստութեամբ, մեծարժէք պատգամ մըն է ինձի համար, եւ նոյն ատեն՝ հազուագիտօրէն բարձր հոգիի մը գրաւականը: Կեանքը անողորօքէն կանուխ կը պարտադրէ ինձի գործածութիւնը այդ ղեղազիրին, գոր կ'ընդունին որպէս անփոխարինելի նուէր մը ձեզմէ ինձի: Իսկ քանի մը ամիս մեր մօտ մնալու ձեր խոստումը երջանիկ յոյսերով կը լեցնէ նախ կիներ ու զիս եւ յետոյ այստեղի ձեր բոլոր բարեկամները: Կիներ ու ես կը խնդրենք, եւ ասիկա ձեռականութիւն մը չէ բնաւ, որ հոս գալու համար չսպասէք ամառուան: Այստեղի գարունը, գիտէք, սքանչելի է: Եկէք մեզի, Զատիկի մեր արձակուրդէն առաջ: Կը բնակինք հիմա քաղաքէն դուրս, Հաստատութենէն ոչ շատ հեռու, լաւ եւ ընդարձակ տան մը մէջ, ուր ձեզի պիտի յատկացնենք արեւոտ սենեակ մը, նոյն ատեն ձեր առանձնութիւնն ալ ապահովող: Եւ եթէ ձեր հանգիստին համար չկարենանք լրացնել բոլոր պայմանները, կրնաք վստահ ըլլալ թէ պիտի գտնէք ձեզի հանդէպ սիրով ու հիացումով լեցուն սիրտեր, որոնց համար ճշմարիտ երջանկութիւն մը պիտի ըլլայ

ձեզ իրենց հետ ունենալը: Կը մնաք մեզի մինչեւ ամառ, յետոյ կ'ընտրէք ձեզի յարմար ամառանոց մը: Կը փափաքինք որ պարզ հրաւեր մը չնկատէք այս՝ այլ սրտագին խնդրանք մը:

Կը մտածենք այստեղ, Հայկ. Ակումբի նախաձեռնութեամբ եւ գոյութիւն ունեցող հայ կազմակերպութիւններու գործակցութեամբ, կազմակերպել հանդէս մը՝ նուիրուած ձեր գրական գործունէութեան յիսնամեակին, յառաջիկայ Փետրուարի կամ Մարտի մէջ: Թէեւ ձեր հոս ներկայութիւնը կ'ընծայէ մեծ առաւելութիւններ, բայց որովհետեւ այդ առիթով նիւթական արդիւնք մըն ալ գոյացնելը մաս կը կազմէ մեր ծրագիրին, քերես ատելի յարմար է որ հանդէսը տրուած ըլլայ ձեր գալէն առաջ:

«Համանուագ»իս մասին ձեր գնահատական տողերը⁸⁴ կ'ուրախացնեն զիս, մասնաւորաբար՝ որովհետեւ ձեզմէ կու գան անոնք: Ամիսներէ ի վեր միտքիս մէջ կը պտտցնեն զիս խռովող յուզումներ ու մտածումներ, բայց չեմ գիտեր թէ երբ պիտի կարենամ ձեւ տալ անոնց: Այլեւս անհամբեր սկսած եմ դառնալ այն օրերուն համար ուր առիթը պիտի ունենայի նախասիրած աշխատանքիս ամբողջովին նուիրուելու:

Կի՛նս ու ես կը շնորհատրենք Նոր Տարին ու Ծնունդը եւ կը յուսանք ձեզ հոս տեսնել Չատիկէն առաջ: Մի՛ թողուք որ յուսախաբ ըլլանք. «տենչանքը կէս գոհացած սոսկալի է, սոսկալի՝ ...»⁸⁵

Հիացումով ու սիրով,

Վահէ-Վահեան

ԺԳ.

Նիկոսիա, 11 Մարտ 1945

Սիրելի Պրն. Վահան Թէրեան,

Գրած եմ ձեզի 29 Դեկտ. 1944 թուականով նամակ մը գոր կը յուսամ ստացած էք ժամանակին:

Կի՛նս ու ես անձկութեամբ կը սպասենք պատասխանին⁸⁶, ուր կը յուսանք գտնել՝ մեզի խոստացած ձեր այցելութեան թուականը, եւ մօտիկ թուական մը: Կը կրկնեն, ինչ որ գրած էի նախորդ նամակովս՝ կը խնդրեմ որ սովորական հրաւեր մը չնկատէք, այլ՝ սրտագին փափաք մը:

Անցեալները, «Արեւ»ի յորելինական հատորի յանձնախումբէն ստացայ նամակ մը, որով կ'ըսէին թէ կը փափաքէին ունենալ ինձմէ կտոր մը եւ յուսանկարս՝ ծրագրուած հատորին համար:

Ներփակ կը դրկեն քերթուած մը եւ յուսանկարս: Եթէ համիք քերթուածը, կը խնդրեմ որ յանձնէք պահարանը հատորի խմբագրութեան. այլապէս՝ բարի եղէք յայտնել իրենց՝ ձեռնարկուած հատորին յարմար գրուածքով մը չկարենալ մասնակցելու ցաւս, եւ նետել քերթուածը հո՛ն ուր արժանի է:

Կի՛նս եւ ես կը սպասենք ձեր լաւ լուրերուն:

Մտերմական սիրով ու յարգանքով,

Վահէ-Վահեան

Յ.Գ. «Արեւ»ի մէջ տրուած ապաքինման լուրէն իմացայ թէ Տիար Շ. Սեւոյնբեանը լուրջ հիւանդութիւն մը անցուցեր է: Կը խնդրեմ որ յայտնէք իրեն՝ իր ապաքինման առիթով իմ անկեղծ խնդակցութիւնս:

Վ-Վ

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Անտիս Սանճեան, *Վահան Թէրեան – Նամականի*, հրատարակութիւն Թէրեան Աշակութային Միութեան, Ռոբըրթաուն, «Ապրիլ» հրատարակչատուն, Լոս Անճեյըս, 1983: «Ծանօթագրութիւններ» բաժնին մէջ համապատասխան քիւերով ծանօթագրուած նամակները կը գրաւեն *Նամականի*ին հետեւեալ էջերը՝ Նամակներ թիւ 166 եւ 167, Փարիզ, 28 Ապրիլ 1933 եւ Փարիզ, 22 Յունիս 1933, էջ 341-343:

Նամակ թիւ 176, Փարիզ, 14 Հոկտեմբեր 1933, էջ 356-357:

Նամակ թիւ 190, Փարիզ, 17 Ապրիլ 1934, էջ 376-378:

Նամակներ թիւ 192 եւ 193, Փարիզ, 10 Յուլիս 1934 եւ Փարիզ, 31 Օգոստոս 1934, էջ 379-383:

Նամակներ թիւ 205 եւ 206, Նիկոսիա, 28 Յունիս 1935 եւ Նիկոսիա, 12 Յուլիս 1935, էջ 396-398:

Նամակ թիւ 213, Գահիրէ, 2 Նոյեմբեր 1936, էջ 405-406:

Նամակներ թիւ 240 եւ 241, Գահիրէ, 7 Օգոստոս 1939 եւ Գահիրէ, 12 Սեպտեմբեր 1939, էջ 435-437:

Նամակ թիւ 249, Գահիրէ, 3 Ապրիլ 1940, էջ 445:

Նամակ թիւ 252, Գահիրէ, 17 Յունիս 1940, էջ 447:

Նամակ թիւ 273, Գահիրէ, 7 Մարտ 1944, էջ 475-476:

Նամակ թիւ 278, Գահիրէ, 15 Դեկտեմբեր 1944, էջ 483-485:

² Սանճեան, էջ 341:

³ Սանճեան, էջ 342:

⁴ Սանճեան, էջ 356:

⁵ Սանճեան, էջ 396, 397 եւ 436:

⁶ Վահան Թէրեան, *Հատրմտիր*, հրատարակութիւն Թէրեան Աշակութային Միութեան Կեդրոնական Վարչութեան, Պէյրութ, Թեքնոլիքս, 1978:

⁷ Յակոբ Օշական, *Վահան Թէրեան*, ներածական եւ ծանօթագրութիւններ Վաչէ Ղազարեանի, Պէյրութ, Ալթափրես, 1985:

⁸ Կ'ակնարկով Թէրեանի Փարիզէն գրած 10 Յուլիս 1934 թուակիրը (տե՛ս՝ Սանճեան, էջ 379-380):

⁹ Անդրանիկ Ծառուկեան (1912-1989), բանաստեղծ, արձակագիր, խմբագիր: Իր *Եղեռնաբախտ Զերրոզներ* գործը, որմէ օրինակ մը ձօնած է Թէրեանին, ստորագրած է որպէս Վ. Խաժակ: Օգտագործած է նաեւ Վազգէն Տէրունեան անունը բանաստեղծութիւններու ներքեւ: Թէրեան զինք նկատած է տաղանդաւոր: Վահէ-Վահեան 14 Հոկտ. 1933 թուակիր նամակով մը, որուն պատճէնը չունինք ձեռքի տակ, Թէրեանին արտայայտուած է Ծառուկեանի մասին, զայն ներկայացնելով որպէս «*քիչ մը շատ յախուռն տակաւին, յանձնապաստան ու անփոյթ*» մէկը, շատ հաւանաբար նաեւ նշելով իրենց միջեւ գտնուող ազգականական կապը: Վահեան Թէրեանի նամականին հրատարակած Սանճեանին տուած է հետեւեալ հակիրճ լուսարանութիւնը Ծառուկեանի անձնասպանական փորձին մասին. «*Համազգային Ճեմարանին մէջ՝ կարգապահական լուրջ թերացումներ՝ այն ատեն աշակերտ Մառուկեանի կողմէ, իր*

րել Հետեւանք՝ 1934-ի ամավերջի հանդէսին մէջ, տնօրէնութեան կողմէ կատարուած բացայայտ յայտարարութեամբ մը իր Հեռացումը ճեմարանէն, զիս կեանք մը տնտեսելու համար՝ բարեկամներէ կատարուած փոխառնութիւններով դիզուած պարտքեր իր վրայ, արկածախնդրական սիրոյ պատմութիւն մը, ռոմանդիկ բաներէ ախորժող խառնուածք եւ զգայացունց ղէպքերու հեղինակ ներկայանալու տենչ՝ միացան իրարու, յանգելու համար այդ արարքին» (Սանճեան, էջ 640-641):

¹⁰ Վահեան իր գրաւոր արտայայտութիւններէն մէկը կատարած էր, օրինակ, Թէրէեանի *Մէր* քերթողագիրքին լոյսընծայման առիթով, 1933ին, իբրեւ բեմ ունենալով *Սիոն* ամսագիրը (թիւ 9, էջ 288-290):

¹¹ Թէրէեան իր 10 Յուլիս 1934 թուակիրին մէջ ունի հետեւեալ նախադասութիւնը. «*Լուսնայոյսով, տժգոյն լուսապսակով մը շրջապատուած կ'երեւայ իր ղէմքը ձեզի*» (Սանճեան, էջ 379):

¹² Շարլ Փիէր Պոտրլէո, (1821-1867), *Չարի Ծաղիկները* հոշակատր քերթողական հատորի ֆրանսացի հեղինակը, որ Վերլէնի եւ Մալարմէի հետ կը նկատուի հիմնադիրը անկումային հոսանքին: Թէրէեան սրտամօտիկ գտած է Պոտրլէոի բանաստեղծութիւնները եւ հայացուցած է անկէ, ինչպէս նաեւ Վերլէնէն կարգ մը գործեր:

¹³ Ակնարկութիւն ժ.է. դարու ֆրանսացի առակագիր Լաֆոնթէնի առակին, որ կը վերաբերի եզան չափ մեծնալ փափարող գորտի մը, որուն ուռչելու փորձերը կ'ունենան եղերական վախճան:

¹⁴ 28 Մայիս 1928ին Գահիրէ հիմնուած Համազգային Մշակութային Միութեան Լիբանանի մասնաճիւղը 1929ին Պէյրութի մէջ կեանքի կոչած էր Նշան Փարսնճեանի անունով ծանօթ Ենմարանը:

¹⁵ Ընթերցողը հոս պիտի նշմարէ լեզուական-տրամաբանական սայրարում մը: Պահպանած ենք բնագրին հարազատութիւնը եւ խոստոված՝ ուղղում առաջարկելէ:

¹⁶ Թէրէեան իր 10 Յուլիս 1934 թուակիրին մէջ կը գրէր. «*Եռագոյնը ... միշտ կը շլացնէ՞ իր աչքերը, որ սեւին ու ճերմակին վեհութիւնովը լեցուեցան պահ մը*»: Ապա նաեւ. «... վերադարձած է ան ... շատ մեծ իմաստութիւն մը գրկած» (Սանճեան, էջ 380 եւ 379):

¹⁷ Վահէ-Վահեան այդ շրջանին կը պաշտօնավարէր Պրումմանայի Անգլիական Երկրորդական Գիշերօթիկ Վարժարանին մէջ իբրեւ ուսողութեան, բնագիտութեան եւ տարրաբանութեան ուսուցիչ: Վարժարանը կը պատկանէր Զուէյրըրներուն:

¹⁸ 1934-1935 կրթական տարեշրջանին Վահեան պաշտօնավարած է Անիլիասի դպրեվանքին մէջ՝ աւանդելով հայերէն եւ անգլերէն լեզուներու եւ հայ գրականութեան դասեր:

¹⁹ Սիրան [Չարիֆեան-Զիւլիէլեան] Սեզա (1903-1973), արձակագիր եւ հրապարակագիր: Հիմնադիր-խմբագիր *Երիտասարդ Հայտի*ի հանդէսին, որուն աշխատակցած են թէ՛ Թէրէեանն ու թէ՛ Վահեանը:

²⁰ Իմա՝ Լիբանան: 1930ականներուն Լիբանան տակաւին կը ճանչցուէր իբրեւ մէկ մասը մեծն Սուրիոյ:

²¹ Ակնարկութիւնը կ'երթայ Թէրէեանի յորելեանին, որ 1934ին նշուեցաւ զանազան զաղութներու մէջ, բայց Պէյրութ բացակայ մնաց պաշտօնապէս զայն նշող քաղաքներու ցանկէն, մինչ Հալէպի մէջ Զաղաբական Ժողովի նախաձեռնութեամբ յորելեանական հանդիսութիւն մը տեղի ունեցած էր 1934ի Մայիս 22ին:

²² Խնդրոյ առարկան «Կոմիտաս Վարդապետ» քերթուածն է (Վահան Թէրէեան, *Հայերգութիւն*, Գահիրէ, 1943, էջ 142): Չեոքի տակ շունինը պատճենը Վահէ-Վահեան

նին դրկուած տարրերակին, բայց իր վերջնական, հրատարակեալ ձեռով այս նա-
մակին մէջ ակնարկուող տողերը կը կարդացուին այսպէս՝

Դուն ճրագ՛տ մ՛արդէն՝ նուրբ, եփենաշող...

... Գետնին տակ պահուած, հոսուն, գլղրլուն,

Հայրենի երգին աւագանն անհուն...

... Եւ ճրագտն ընդմիշտ ճաթած է հիմա...

Վահեան իրաւացի էր երբ քաղաքավարօրէն կը նշէր թէ վարպետին «խատապահանջ
բժախնդրութիւնը տակաւին վերջնական մշակումի չէ տարած գալն»։ Թէրէեանի ար-
խիւին մէջ պահպանուած նիւթերը կը հաստատեն թէ Թէրէեան առնուազն երկու
տարրեր առիթներով վերամշակումի ենթարկած է այս հնչեակը յետագայ տարիներու
նում:

²³ Լեւոն Չաւէն Միւրմէլեան (1905-1995), անգլիագիր արձակագիր, որ գրականութեան
հետ իր սկզբնական շփումը կատարած է հայերէն քերթումներով, զորս Թէրէեան
խմբած է լոյսին տուած է *Լոյս Չուարր* խորագրով 1924ին, Փարիզ:

²⁴ Միւրմէլեան Ամերիկա անցած է 1922ին, Հայ Գիւղատնտեսական Միութեան աջակ-
ցութեամբ, Քենզըսի Համալսարանին մէջ երկրագործութեան հետեւելու նպատա-
կով: 1924ը *Լոյս Չուարր* քերթողագիրքի հրատարակութեան թուականն է: Տեղին է
նշել թէ Թէրէեան իր պատասխան նամակին մէջ տեղեկութիւն չէ տուած Միւրմէլեա-
նի մասին:

²⁵ Թէրէեան Երուսաղէմ այցելած է 22 Յուլիս 1935ին ուր օրով, ապա անցած է Պէյրոս
եւ այնուհետեւ մեկնած Գահիրէ (Մանճեան, էջ 397):

²⁶ Այս բացիկին պատճենը կը բացակայի Մանճեանի *Նամականիէն*: Չայն չենք տե-
սած որեւէ տեղ:

²⁷ Մարգիս Եափուճեան (1914-?), կրթական մշակ, Խորհրդային Հայաստանի Վաս-
տակաւոր Ուսուցիչ, որ 1971-1991 տարիներուն Խորհրդային Հայաստանի Կրթա-
կան Նախարարութեան մէջ պաշտօնավարած շրջանին եղած է Արտաքին Յարա-
բերութիւններու Բաժնի Աագ Տեսուչ եւ պատասխանատուն՝ Սփիւռքի հայ դպրոց-
ներուն համար պատրաստող դասագիրքերուն: Ունի նաեւ հրատարակուած գոր-
ծեր:

²⁸ Չկրցանք հիմնաւոր տեղեկութիւն ապահովել Վահէ Մարտիրեանի մասին: Աղբիւրի
մը համաձայն, ան գրադած է ուսուցչութեամբ եւ Համաշխարհային Բ. Պատերազ-
մէն ետք միացած է Հայաստան ներգաղթողներու կարասանին:

²⁹ Գրիգոր Կիրակոսեան (1888-1974), Մելգոնեան Կրթական Հաստատութեան (ՄԿՀ)
տնօրէն եւ ապա Ընդհանուր Տնօրէն Հայկական Բարեգործական Ընդհանուր
Միութեան (ՀԲԸՄ) մինչեւ հանգստեան կոչուիլը:

³⁰ Վահեան պաշտօնի կոչուած էր ՄԿՀի մօտ, ուր Թէրէեան կը գործէր իբրեւ Վարժա-
պետանոցի տնօրէն: Թէրէեանը շուտով տեսնելու յոյսը, սակայն, պիտի չիրականա-
նար, որովհետեւ Թէրէեան, ընդառաջելով բախանձագին խնդրանքներու, վերա-
դարձած էր Գահիրէ վերստանձնելու *Արեւ* օրաթերքի պատասխանատու խմբագրի
պարտականութիւնը:

³¹ Գահիրէ հրատարակուող *Արեւ* օրաթերքին:

³² Մեզի վստահուած պատճեններէն կը բացակայի խնդրոյ առարկայ ստեղծագործու-
թիւնը:

³³ Թէրէեան-Վահեան հանդիպումը տեղի ունեցած է 1936ի Սեպտեմբերին, երբ Թէրէ-
եան հերթական անգամ այցելած էր Լիբանան: Այդ առիթով է որ լիբանանցի բա-

- նաստեղծ Սախտ Արլ ծանօթացած է Թէրէեանի հետ եւ անոր բարգմանութիւնները արաբերէնի վերածելով, հայ քերթողը ներկայացուցած է Լիբանանի արարախօս բնակչութեան:
- ³⁴ Օճնիկ Մահտեսեան ՄԿՀի մէջ պաշտօնավարած է 1932-1944՝ իբրեւ դիւանապետ, ինչպէս նաեւ դասատու հայերէն լեզուի, հայ գրականութեան, ազգային պատմութեան, բնագիտութեան, ֆրանսերէն լեզուի, բնապատմութեան եւ կրօնքի:
- ³⁵ Միքայէլ Կիւրճեան (1878-1965), արձակագիր, երգիծարան, հրապարակագիր: Թէրէեանի մտերիմ բարեկամ եւ գործակից:
- ³⁶ Բարունակ Թովմասեան (1910-1991), Ռամկավար Ազատական Կուսակցութեան երկարամեայ ղեկավար, որուն անդուլ ջանքերով Պէյրութի մէջ հիմնուեցաւ *Չարթօնը* պաշտօնաթերթը՝ իբրեւ հիմնադիր խմբագիր ունենալով Վահան Թէրէեանը:
- ³⁷ Թէրէեանի քերթուածներու երկրորդ ժողովածուն, հրատարակուած Պոլիս 1908ին:
- ³⁸ Մինաս Թէօլէօլեան (1913-1997), գրադատ, հրապարակագիր եւ խմբագիր: Ունի Թէրէեանի նուիրուած փոքրիկ աշխատութիւն մը՝ *Վահան Թէրէեան* (Իսթամպուլ, 1933, 29 էջ), զոր պատրաստած է իբրեւ աւարտաճառ Պոլսոյ Մխիթարեան Լիւթի տարեվերջի ընդհանուր քննութեան:
- ³⁹ ՀԲԸՄ Կեդրոնական Վարչական Ժողովին որոշումով 2005ին փակուած այս Հաստատութիւնը Կարապետ եւ Գրիգոր Մելգոնեան բարերարներու կտակով հիմնուած էր 1924ին:
- ⁴⁰ Տե՛ս ծանօթագրութիւն քի 5:
- ⁴¹ Հիւսիսարեւմտեան Փոստս կէտէն մինչեւ Լառնաքայի ծոցի մերձակայքը երկարող լեռնաշղթայ եւ օդափոխութեան վայր:
- ⁴² Ֆրանչիսկեան միաբանութեան պատկանող այս դպրոցը հիմնուած է 1926ին եւ գործած մինչեւ 1947: 2004ին Ֆրանչիսկեանները, յետ երկարատեւ բանակցութեան, յաջողած են վերաբանալ զայն:
- ⁴³ Աշխէն Ապտալեան ՄԿՀի մէջ պաշտօնավարած է աղջկանց բաժնի օգնական հերթապահի հանգամանքով, միաժամանակ աւանդելով անգլերէն լեզուի դասեր: Ուսուցչական ասպարէզը քած է քառամեայ ծառայութենէ ետք, 1939ին:
- ⁴⁴ Այս նամակը պարփակող պահարանին եզրին եգիպտական իշխանութիւնները դրոշմած են «Եգիպտական գրաքննութիւն» բառերը:
- ⁴⁵ Այս նամակին մինչեւ հոս երկարող հատուածին մասին հարկ է տալ հետեւեալ ծանօթագրութիւնը: Վահեան Թէրէեանին գրած է 12 եւ 21 Օգոստոս թուակիր նամակներ, որոնց պատճենները չունինք ձեռքի տակ: Անոնցմէ մէկով Վահեան ուղարկած է իր «Ճեպէլ Մուսա» բանաստեղծութիւնը, ձօնուած Թէրէեան «քերթողապետ»ին: Թէրէեան իր 29 Օգոստոս 1939 թուակիրով առաջարկած է բարեփոխութեան ենթարկել քերթուածը եւ թելադրած է հրաժարիլ «քերթողապետ» արտայայտութենէն ու բաւարարուիլ «քերթող»ով (Սանճեան, էջ 437):
- Ընթացք տալով Թէրէեանի նշումներուն, Վահեան «Ճեպէլ Մուսա»ն հրատարակած է ձօնով մը, որ ուղղուած է «Վահան Թէրէեան բանաստեղծին» եւ ո՛չ քերթողապետին, միաժամանակ կատարելով այլ հպումներ, որոնցմէ շահած է քերթուածին աւարտուն տարբերակը (Վահէ-Վահեան, *Հատրնտիր*, Պէյրութ, 1986, էջ 119):
- ⁴⁶ Վերոյիշեալ նամակին մէջ, Թէրէեան կ'ըսէ. «*Բա՛ն մը «քերթողապետ»ին համար: «Պետ» որի՞, ինչի՞: Եւ կրնա՞յ ըլլալ: «Քերթող»ը բաւական չէ՞ արդէն, իր աւելի կամ նուազ լայն առումովը, ան ալ եթէ posterité-ն (մերիմը՝ որուն վրայ միայն կրնանք հաշուել) հաճի ընդունիլ. բա՛ն մը որ, անկեղծօրէն, հիմա բոլորովին անտարբեր կը*

- Թողու զիս... »*: Փակագիծերուն մէջ շեղագրուած «ձերինը», որ բնագրային ձեւն է (Վահեան արդէն կը հաւաստէ այս, քսելով «ձեր postérité-ին... »), Սանճեանի պատրաստած *Նամականիին* մէջ «ձերինը»-ի փոխարէն տպուած է «ձերինը», խնդարիւրելով իմաստը նախադասութեան:
- ⁴⁷ Արշակ Չօպանեան (1872-1954), բանաստեղծ, գրադատ, մշակութային եւ քաղաքական գործիչ, հրապարակագիր, խմբագիր:
- ⁴⁸ Վահան Մալեգեան (1871-1966), մասնագիտութեամբ իրաւաբան բանաստեղծ, ծանօթ յատկապէս իր երկարատեւ պաշտօնավարութեամբը իբրեւ ՀԲԸՄի Վարիչ Տնօրէն:
- ⁴⁹ Ակնարկուող անձը կը թուի ըլլալ կիլիկի Անահիտ Աւետիսեանը, կինը՝ գեղանկարիչ եւ արուեստարան Օննիկ Աւետիսեանի: Ինչ կը վերաբերի ակնարկուած նամակին, Վահեան կամ չէ պահած գայն, կամ հրատարակութեան չէ ուզած տալ Սանճեանի *Նամականիով*:
- ⁵⁰ Յուլակ Ապտալեան, ասպարէզով ճարտարապետ: Իր գեղարուեստական ձեւաորումով լոյսին եկած են իր հօր՝ Վահէ-Վահեանի հրատարակութիւններէն ոճանք:
- ⁵¹ Թէրէեան «Շահան Շահնուրի Համար» խորագրեալ երկու կոչ ուղղած է հանրութեան *Արեւի* 1940ի Մարտ 18 եւ 19ի թիւերով, գնահատելով անոր «*Թափանցիկ, թեւաւոր ու պսպղուն ոճ*»ը եւ մատնանշելով կարիքը ֆրանսական առողջարաններու գոյքին դատապարտուած Շահնուրին օգնութիւն փութացնելու:
- ⁵² Գահիրէի *Արեւ* օրաթերթի 1940ի Ապրիլ 13ի թիւով Թէրէեան հրատարակած է «Լուրեր Շահան Շահնուրէն», իսկ աւելի ուշ, Մայիս 15ին եւ 16ին, ստորագրած է դարձեալ «Շահան Շահնուրի Համար» խորագրեալ երկու առաջնորդող գրութիւն, հուսկ ապա, Յունիս 1ի թիւով քարգմանաբար տալու համար Շահնուրի «Ամբողջ Թրաֆալկարը» անտիպ գործը:
- ⁵³ Կը թուի թէ նախորդ ծանօթագրութեամբ յիշուած «Լուրեր Շահան Շահնուրէն» գրութեան կը վերաբերի ակնարկութիւնը, սակայն պատեհութիւնը չենք ունեցած ստուգելու թէ Վահեանի նամակին վերաբերեալ ակնարկութիւնը հո՞ն լոյս տեսած է, թէ այլուր:
- ⁵⁴ *Արեւի* Ապրիլ 5ի թիւով հանրութեան ծանուցուած էր ցրտառութեան պատճառով Թէրէեանի անհանգստացած ըլլալը:
- ⁵⁵ *Միոն* (սկզբնապէս *Միօն*), Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան պաշտօնական հրատարակութիւնը, իբրեւ ամսաթերթ սկսած է հրատարակուիլ 1866ին, Երուսաղէմ, եւ յիսնամեայ ընդհատումէ մը ետք (1877-1927) կը շարունակէ լոյս տեսնել մինչեւ թոսականս: *Միոնի* 1940ի Մարտի թիւով լոյս տեսած է Վահեանի «Երգ Հաշտութեան Ու Սիրոյ» քերթուածը (էջ 57-58):
- ⁵⁶ Գէորգ Մեհրեան ՄԿՀի մէջ պաշտօնավարած է 1934-1937 տարիներուն, աւանդելով անգլերէն լեզուի եւ կրօնքի դասեր: Ան եղած է նաեւ արիապետ:
- ⁵⁷ Իճա՝ Համաշխարհային Բ. Պատերազմը:
- ⁵⁸ Վահան Թէրէեան, *Հայերգութիւն*, տպագրք. «Արեւ»ի, Գահիրէ, 1943:
- ⁵⁹ Մեզի ծանօթ է ո՛չ թէ Հայ Գրագէտներու Բարեկամներ, այլ Հայ Գիրքի Բարեկամներու Ընկերակցութիւն (*Արեւ* օրաթերթ, 2 Փետրուար 1944ի համարը, ուր տեղեկատուութիւն մը կայ այն մասին, թէ Թէրէեան խօսած է Մկրտիչ Պէշկեպաշեան քանաստեղծին մասին Ընկերակցութեան կազմակերպած հաւաքի ընթացքին) կամ Միութիւն (Գառնիկ Մտեփանեան, *Կենսագրական Բառարան*, հատոր Գ., Երեւան, 1990, էջ 246) անունով մարմին մը: Ի դէպ, 1942ին եւ 1943ին Գահիրէ լոյսին տրուած

էջեր Հայ Գրականութենէն երկհատորեակը, իր անուանաթերթերով եւ պարունակած տեղեկութիւններով կը հիմնադրէ թէ գրատրոսները խմբուած էին պաշտօնապէս Հայ Գիրքի Բարեկամներու Ընկերակցութիւն անունին տակ: Մանրամասնեալ տեղեկութիւնները տեսնել՝ Ա. հատորի 388-396 եւ Բ. հատորի 348-351 էջերուն մէջ:

⁶⁰ Հայկ Ժամկոչեան (1911-?), գրող, հրատարակագիր, խմբագիր Գահիրէի *Չահակի* թերթի:

⁶¹ Վահէ-Վահեան, *Արեւ-Անձրեւ*, Պէյրութ, 1933:

⁶² Այդ բախտաւոր ժամանակը պիտի հասներ Թէքէեանի մահէն եւ Բ. Աշխարհամարտի աւարտէն ետք, 1946ին, լոյսին բերելով Վահեանի երկրորդ թերթողագիրքը՝ *Ոսկի Կամուրջ*, դարձեալ հրատարակուած ի Պէյրութ:

⁶³ Թէքէեան 1943ին սկսած էր *Արեւի* մէջ հրատարակել յուշեր իր պատանեկան-դպրոցական կեանքէն եւ առանձին գրութիւններով, բայց «Յուշեր» ենթախորագրով, անդրադարձած էր Արփիար Արփիարեանի, Գրիգոր Զօհրապի, Եղիա Տէմիրճի-պաշեանի, Բիւզանդ Թէշեանի եւ Լեւոն Բաշալեանի:

⁶⁴ Առաքել Պատրիկ (1894-1984) նկարիչ, բանասէր եւ ուսուցիչ, նախագահ Գահիրէի Հայ Գիրքի Բարեկամներու Ընկերակցութեան (տես՝ ծանօթ 58):

⁶⁵ Շաւարշ Սեւօսթեան (1901-1993), մասնագիտութեամբ իրաւաբան եւ Ռամկավար Ազատական Կուսակցութեան ղեկավար ղեմքերէն ու Թէքէեանի վերջին տասնեակ մը տարիներու մտերիմ գործակիցներէն: Յետագային, երկար տարիներ, ան պիտի վարէր ՀԲԸՄի Զուիցերիական Իրաւափճակով Գրասենեակի տնօրէնի եւ Իրաական Խորհրդատուի պարտականութիւնը: Թէքէեան զինք կարգած էր կտակարար եւ ան էր որ Թէքէեանի արխիւին հիմնական մասը Չարենցի Անուան Հայաստանի Գրականութեան Եւ Արուեստի Թանգարանի Տնօրէնութեան յանձնած էր, երբ Ստեփան Ալաջաջեան տնօրէն էր Թանգարանին, իսկ այս ծանօթագրութիւնը գրողը հոն կը պատրաստէր Թէքէեանին նուիրուած իր վարդապետական աւարտաճառը:

⁶⁶ Թէքէեան, որ այդ շրջանին ատենապետն էր Ռամկավար Ազատական Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան, տարակարծութիւններ ունեցած է իր գործակիցներուն հետ: Սեւօսթեան, իբրեւ նոյն վարչութեան անդամի, ընդհանրապէս բաժնած է Թէքէեանի տեսակետերը եւ ինք ալ, իր հերթին, դժուարութիւն ունեցած է հեզասահ գործակցութիւն մը ունենալու իր պաշտօնակիցներուն հետ: Մանրամասնութիւնները կը վերապահուին ուրիշ աղբի:

⁶⁷ Թէքէեանի 15 Դեկտ. 1944 թուակիր պատասխան նամակէն կարելի է մակարերել թէ խօսքը «Համանուագ» (Վահեան, *Հատընտիր*, էջ 107-110) թերթուածին մասին է:

⁶⁸ Ներկայիս կը բաւարարուինք այս նամակին յաջորդող շրջաբերականին պարունակած տեղեկութիւններով Միութեան կազմութեան եւ նպատակին մասին:

⁶⁹ Ռամկավար Ազատական Կուսակցութեան Գահիրէի պաշտօնաթերթը, որուն պատասխանատու խմբագիրն էր Թէքէեան, եւ որ սակայն առողջական եւ այլ պատճառներով 1944ին քիչ անգամ ուղղակի առնչութիւն կ'ունենար թերթին հետ: *Արեւ* սկսած էր հրատարակուիլ 1915ին եւ կը շարունակէ լոյս տեսնել իբրեւ օրաթերթ:

⁷⁰ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Գահիրէի պաշտօնաթերթը, հիմնուած 1912ին, որ նոյնպէս կը շարունակէ լոյսին գալ իբրեւ օրաթերթ:

⁷¹ Ռամկավար Ազատական Կուսակցութեան Լիբանանի պաշտօնաթերթը, որուն հիմնադիր-խմբագիրն է եղած Թէքէեանը 1937ին եւ որ 10 Յունուար 2007, 70րդ տարի, քիւ 5 (19.699)էն ետք առայժմ դադրած է:

⁷² Լիբանանի Համայնավար Կուսակցութեան հայկական բաժնի պաշտօնաթերթը, որ իբրեւ օրաթերթ հանրութեան ներկայացուած է 1938-1947 տարիներուն:

- ⁷³ Արտասահմանեան Երկիրներու Հետ Բարեկամութեան Եւ Մշակութային Կապի Հայկական Ընկերութիւնը իրրեւ կամաւոր հասարակական կազմակերպութիւն իմնուեք է 20 Նոյեմբեր 1944ին: Այս կազմակերպութիւնն է որ զբաղած է ափիւքահայ հաստատութիւններու եւ անհատներու հետ մշակութային եւ բարեկամական կապերու մշակումով մինչեւ 1964ին ստեղծումը Սփիւքահայութեան Հետ Մշակութային Կապի Կոմիտէին:
- ⁷⁴ Աւետիք Իսահակեան (1875-1957), քանաստեղծ, որ տունեայ տարիներուն անվիճելիօրէն կը կրէր «Վարպետ» պատուանունը:
- ⁷⁵ Մարիա Պետրոսեան (1911-1971), մասնագիտութեամբ փիլիսոփայ, որ դասախօսած է Մոսկուայի եւ Երեւանի բարձրագոյն ուսումնական հաստատութիւններու մէջ: 1945-1946 զլխատրած է Արտասահմանեան Երկիրներու Հետ Բարեկամութեան Եւ Մշակութային Կապի Հայկական Ընկերութիւնը:
- ⁷⁶ Գեորգ Չ. Չօրտրճեան (1868-1954) Կարողիկոսական Տեղապահի պաշտօնին կոչուած էր 1941ին եւ Ամենայն Հայոց Կարողիկոս ընտրուած՝ 1945ին: Իր օրով վերաբացուած էին Գեորգեան Ծննդարանն ու Մայր Աթոռի տպարանը, ինչպէս նաեւ վերահրատարակուի սկսած էր *Էջմիածին* ամսագիրը:
- ⁷⁷ Աշոտ Աբրահամեան (1903-1983), աղբիւրագետ եւ պատմաբան, որ 1944ին խմբագիր նշանակուած էր *Էջմիածին* ամսագրին եւ Ամենայն Հայոց Կարողիկոսութեան պատուիրակի հանգամանքով այցելած էր կարգ մը գաղութներ, ի միջի այլոց օգտակար ըլլալու համար ներգաղթի կազմակերպման աշխատանքներուն:
- ⁷⁸ Սանճեանի հրատարակած *Նամականի*ին մէջ այս նամակը ներկայացուած է որպէս 15 Դեկտեմբեր 1944 թուակիր: Զանի որ Վահեան ինք Թէքեանին նամակները արտագրած եւ տրամադրելի դարձուցած է Սանճեանին, կամ *Նամականի*ին մէջ սխալ գացած է թուականը, կամ ալ Վահեան 15ի փոխարէն 5 նշած է իր նամակին մէջ:
- ⁷⁹ Թէքեան պարզապէս ըսած է. «Կը փափաքիմ յառաջիկայ ամառ՝ եթէ ողջ մնամ ու եթէ կարելիութիւնը ունենամ, զոնէ երկու ամիս Կիպրոս անցընել եւ Ձեր մօտը ըլլալ...» (Սանճեան, էջ 484):
- ⁸⁰ Թէքեան Կիպրոսի մէջ ծնած թիրիմացութիւններու վերագրելով խնդրոյ առարկայ պարագան, անհրաժեշտ կը գտներ որ «տեղական եւ ընդհանուր շահուն համար» հոն ալ փարատին անոնք, եւ կը թելադրէր Վահեանի որ օգնէ իր կողմէ հասկացողութիւն գոյացնելու տարակարծիք կողմերուն միջեւ, մանաւանդ որ բոլորը կը միանային «Հայաստանի սիրոյն մէջ» (Սանճեան, էջ 483-484):
- ⁸¹ Բայց Թէքեան վստահաբար նշմարած էր այդ նրբութիւնները, որովհետեւ իր նամակին մէջ չակերտած էր *սպասուակիք* բառը (Սանճեան, էջ 483): Թէքեան տունեայ նամակին մէջ նաեւ նշած է թէ տարիէ մը ի վեր չէ զբաղած *Արեւով* եւ միայն Վահեանին նամակէն է որ տեղեկացած է Հայաստանի Բարեկամներու Միութեան կազմութեան եւ առկայ վեճին:
- ⁸² Թէքեան *Արեւի* Նոյեմբեր 29ի թիով ստորագրած է «Խորհրդային Հայաստանի 24րդ Տարեդարձը» առաջնորդողը:
- ⁸³ Ահաւասիկ Թէքեանի խրատը. «Գիտէ՞ք թէ մտքով շատ չձերանալու համար ի՞նչ պէտք է ընել. դեղագիրս կու տամ ձրի, որպէսզի ապագային գործածէք, երբ պէտք ունենաք. չկառչիլ հին գաղափարներու կամ համոզումներու՝ եթէ նոյնիսկ յայտնած էք զանոնք. նորերը չվանել՝ նոր ըլլալուն համար (ո՛չ ալ ընդունիլ՝ նոյն պատճառով), այլ թողուլ որ ազատօրէն ներս գան եւ, եթէ կրնան, տեղաւորուին: Է՛հ, քիչ մըն ալ

օգնել իրենց տեղաւորումին՝ լիշելով հիները, երբ նոր էին անոնք ու սիրեցիք զիրենք... Պատուեցէ՛ք recette-ս, եթէ չհաւնեցաք. ես այ արդէն՝ հիմա ստեղծեցի զայն ու խնդեցած չեմ վրան» (Սանճեան, էջ 484-485):

⁸⁴ Թէրեան այսպէս գնահատած է զայն. «Ձեր «Համանուագ»ին բոլոր հատուածները, բոլոր տողերը լեցուն են իմաստով, խանդով ու դաշնակութեամբ: Ան ձեր լաւագոյն քերթուածն է եւ, վստահ եմ, լաւագոյններէն մեր արդի բանաստեղծութեան: Չայն երկրորդ անգամ՝ քիչ առաջ, «խստասիրտ ոգիով» մը - Ձեր յանձնարարութեան համաձայն կարդալէ վերջ, աւելի՛ հաւնեցայ անոր, աւելի հմայուեցայ անով... եւ չգտայ որ եւ է բան որ տկար ըլլար, դեղեւէր կամ կազար» (Սանճեան, էջ 484):

⁸⁵ Մէջբերում Թէրեանի «Տննչանքը Կէս Գոհացած» խորագրով բանաստեղծութենէն, որ յետագային պիտի ընդգրկուէր Թէրեանի *Ամբողջական Երկեր* շարքին մէջ եւ այնուհետեւ Վահեան պիտի վերահրատարակէր Թէրեանի մահուան 100ամեակին առիթով իր պատրաստած եւ յառաջաբանով մը օժտած շքեղ *Հատընտիր*ին մէջ, էջ 212:

⁸⁶ Այդ պատասխանը երբեք պիտի չստացուէր, քանի որ Թէրեան ծանր հիւանդ էր այդ օրերուն եւ պիտի մահանար 1945ի Ապրիլի 4ին, խնդրել էտք իր կեանքին պէս պարզ թաղում մը իր մահուան սնարին մօտ գտնուողներէն...:

VAHE-VAHIAN'S LETTERS TO VAHAN TEKEYAN

(summary)

VACHE GHAZARIAN

Vahe-Vahian's (1908-1998) poetry was strongly influenced by Vahan Tekeyan (1878-1945). The two poets had established a long standing literary and ideological friendship that lasted for some eleven years. The friendship had started with Vahian, who had taken the initiative to send Tekeyan his first, newly published poetry book, *Arev-Antsrev* (Sun-rain, 1933) in June

In 1983, Prof. Sandjian published the letters of Tekeyan. There are fifteen letters sent from Tekeyan to Vahian, which are dated between April 28, 1933 and December 15, 1944.

Here, the author, Vache Ghazarian, presents 13 letters of Vahian sent to Tekeyan, which are dated between August 14, 1934 and March 11, 1945.

Unfortunately, both sets of letters do not constitute the entirety of the correspondence that went on between the two poets. At least 5 letters are missing.

The letters of Vahian complement whatever had been published in Sandjian's book. They are useful in revealing the atmosphere of the time, and the difficulties young Armenian authors faced at the inception of their literary careers. Besides, the letters give an insight into the inner feelings and thoughts of Vahian. Furthermore, they elucidate the early years of Vahian's teaching career and his involvement in the pro-Soviet Armenia organization called, Hayasdani Paregamneru Miyutioun (Union of Armenia's Friends), and its first circular in Nicosia, back in September 28, 1944.